

# 1915

## ՉԱՆՂԸՐԸԷՆ ՎԵՐՅԻՇՈՒՄՆԵՐ

Բնագիր Հրատարակություններին

Կազմեց

Յովհաննէս Չիլինկիրեան

Նիս

2013

# 1915

## ՉԱՆՂԸՐԸԷՆ ԿԵՐՅԻՇՈՒՄՆԵՐ

Բնագիր Հրատարակութիւններէն

Կազմեց

Յովհաննէս Չիլինկիրեան

Նիս

2013



# 1915

## ՉԱՆՂԸՐԸՆ ՎԵՐՅԻՇՈՒՄՆԵՐ

Բնագիր Հրատարակություններն կազմեց  
Յովհաննես Չիլինկիրեան  
Նիս 2013

1915-ի

Հայկական Ցեղասպանության 100-ամեակի սեմին  
այս գիրքը կը ձօնենք թուրքերու կողմէ գողցուած  
**Արեւմտեան Հայաստանին**

31.07.2014 Nice

Յովհաննես Չիլինկիրեան

## Յառաջարկ

24 Ապրիլ 1915 թուականը՝ թուրքերու կողմէ կազմակերպուած, հայ ազգը բնաջնջելու եւ հայոց 5000 տարուան հայրենիքը գողնալու ծրագրին գործադրման առաջին հանգրուանն է:

24 Ապրիլ 1915 թուականը՝ հայ մտաւորականները եւ առաջնորդները, այսինքն հայ ազգին ուղեղները սպաննելու համար արտրեյ սկսելու չարաշուք թուականն է...

Այս հայ արտրեյալ մտաւորական եւ առաջնորդներէն շատ քիչեր հրաշքով ողջ վերադարձան...

Այս գիրքին մէջ կը հրատարակենք 24 Ապրիլ 1915-ի արտրեյալներէն Չանդըրը-ի սպանդանոցէն ողջ մնացածներուն քստմելի արտրական կեանքի պատմութիւնը...

Այստեղ հպարտութիւնը ունինք հրապարակաւ յայտնելու որ 24 Ապրիլ 1915-ի արտրեյալներէն ողջ մնացած մտաւորականներուն ականատեսի վկայութիւնները՝ 1915-էն մինչև 2013 եւ մինչեւ այսօր՝ առաջին անգամ ըլլալով կը հրատարակենք քովէ քով առանձին գիրքի մը մէջ...

Ցաւալի է մեզ համար ըսել, որ հայ ժողովուրդը ամէն տարի 24 Ապրիլը կը յիշատակէ, բայց մեծամասնութիւնը 24 Ապրիլին ի՞նչ ըլլալը չի գիտեր...

Բայց ժողովուրդը յանցաւոր չէ այս հարցին մէջ...

Որովհետեւ մեր առաջնորդ կարծուածները, մանաւանդ սփիւոքի մէջ, 1915-էն մինչեւ 2013, արեւմտեան Հայաստանին թուրքերուն կողմէ գողցուելուն դէմ իսկական տեսակէտով ոչ մէկ բան ըրին...

Որովհետեւ սփիւոքի մէջ որոշ հայ կուսակցական առաջնորդները (քիչ բացառութիւններով) իրենց պորտէն կապուած էին հայուն թշնամիներուն զանազան կազմակերպութիւններուն...



Եւ թուրքերը շատ լաւ գիտէին թէ 24 Ապրիլ 1915-ին, հայ մտաւորականները եւ առաջնորդները սպաննելէ յետոյ հայ ժողովուրդը պիտի նմանէր առանց ուղեղի խելագարի մը...

Եւ իրապէս ալ սփիւոքի հայերը 1915-էն մինչև այսօր խելագարներու նման արարքներ գործեցին՝ անմիաբան եւ առանց ծրագրի արարքներ, որոնք հայութեան միայն վնաս հասցուցին: Եվ ամէն օր քիչ մը աւելի մխրճուեացան պատմութեան մոռացութեան քառսին մէջ:

\* \* \* \* \*

Այս գրքին մէջ, Չանդըրըն վերապրող արքայազներէն հետեւեալ անձերու վկայութիւնները կը հրատարակենք.

**1. Յովհան Վարդապետ Կարապետեան**

Լոյս տեսած <<Հայաստանի Կոչնակ>>ի մէջ, Ամերիկա (USA) 1922-ին

**2. Միքայէլ Շամտանճեան**

Լոյս տեսած <<Յուշարձան ապրիլ տասնմէկի>> մէջ, Կ.Պոլիս 1919-ին

**3. Բժիշկ Վահան Այթունեան**

Լոյս տեսած <<Հայ բուժակ>>ին մէջ, Կ.Պոլիս 1920-ին

**4. Արամ Անտոնեան**

Լոյս տեսած Կարօ Գեորգեանի <<Ամէնուն Տարեգիրք>> մէջ, Պէրուք 1959-ին

**5. Օհաննէս Թէրլէմէզեան**

Լոյս տեսած <<1915 – Աղէտ եւ վերածնունդ>>ին մէջ, Փարիզ 1952-ին

**6. Բիւզանդ Քէչեան**

Լոյս տեսած Թեոդիկի <<Ամէնուն տարեցոյց>>ին մէջ, Կ.Պոլիս 1922-ին

Այս գիրքին մեջ Չանդրըրեն վերապրող արքայազններին Գրիգորիս Վարդապետ Պալաքեանին վկայութիւնները չառինք, որովհետեւ Պալաքեան վարդապետ իր գիրքին մեջ Ռուբէն Սեւակի մասին սխալ եւ սուտ բաներ գրած էր:

\*\*\*\*\*

Չանդրըրեն վերապրող արքայազններին գրեթէ բոլորը իրենց յուշերուն մեջ գրած են թէ Ռուբէն Սեւակ մահէ ազատելու համար թուրքին կողմէ առաջարկուած <<թրքանալ>> եւ իսլամանալը մերժած է եւ նախընտրած է մեռնիլ քան թէ թրքանալ:

Եւ վարդանանցի հերոսներուն նման զիտակցաբար նահատակութեան ճամբան ընտրած է:

Ռուբէն Սեւակի զոհաբերութեան ոգիին ուրիշ մէկ ապացոյցը կը տեսնենք՝ վերը նշուած Չանդրըրեն վերապրողներուն վկայութիւններուն մեջ.

Յովհան Վարդապետ Կարապետեանին Ամերիկայի (USA) <<Հայաստանի Կոչնակ>>ի, 1922-ին լոյս տեսած յուշերուն մեջէն հետեւեալ հատուածը նշենք. <<... Յանկարծ սենեակ մտաւ տօքթօր Չիլինկիրեան: Սովորականէն աւելի մռայլ էր կերպարանքը: <<Առաջարկ մը ունիմ ընելիք>> յայտարարեց առանց յառաջընթաց խօսքերու: <<Կը լսեմ թէ Գաղատիոյ կողմերը իսլամացած են կարգ մը հայեր: Չեմ ուզեր որ մեր ընկերներէն ոեւէ մէկը այդպիսի տկարացում ունենայ ապագայ հաւանական ճնշումներու առջեւ, ուստի կը թելադրեմ որ դուն իբր հոգուորական կանչես հոս գտնուողները եւ երդում առնես իւրաքանչիւրէն թէ հաստատ պիտի պահեն քրիստոնէական հաւատքնին>>:

Ջանացի հանդարտեցնել տօքթօրը եւ բացատրեցի անպատեհութիւնները, որ կային այդօրինակ արարողութեան մեջ, նկատի



ունենալով մանաւանդ ժամանակին փափկութիւնը եւ մեր ընկերները անհարկի յուզման չի մատնելու անհրաժեշտութիւնը:

Համակերպեցաւ չի պնդել իր տեսակետին վրայ, սակայն այդ միջադէպը կարծես կանխաձայնութիւն մըն էր մօտալուտ սարսափներու>>:

Յովհան Վարդապետ Կարապետեանին գրեթէ մերժողական պատասխանէն ետք Ռուբէն Սեւակ ի՞նչ ըրաւ...

Ռուբէն Սեւակին զոհաբերութեան ոգիին ապացոյցը կը կարդանք Չանդրըրը աքսորուած, բայց հրաշքով վերապրած մտաւորականներէն Միքայէլ Շամտանճեանի <<Ականատեւսի վկայութիւններ>>ուն մէջ, որոնք 1919-ին Կ.Պոլսոյ մէջ լոյս տեսան <<Յուշարձան Ապրիլ տանսնմէկի>> գիրքին մէջ:

<<1915 Յունիսի վերջերը մեկուկէս ամիսի չափ միասին ապրեցայ Սեւակի հետ: Պոլսէն ծանօթ էր ինձի իր դիրահաղորդ եւ զուարթ հոգին...

...Իսլամի ծոմապահութիւնը սկսած էր արդէն, եւ ծայր տուած եղեռնի ապերասանութիւնը: Ջարդերու չարաշուք գրոյցներ սկսած էին մեր ականջը հասնիլ:

Այդ միջոցներուն էր, որ մը մեծ իրարանցումի մէջ տեսայ զինք: Այն տեսակ իօսք մը տարածուած էր աքսորականներուս մէջ, թէ մահմետականութիւն ընդունողը ազատ պիտի արձակուէր: Այդ ատենները, առաջին կարաւանը մեկնած էր արդէն եւ եօթանասուն հոգիի չափ մնացած էինք: Ամբողջ երկու օր, խեղճը աշխատեցաւ, համոզելու համար տկար հոգիները, որ մահը մահմետականացումէն աւելի աղէկ է, եւ զատ զատ երդում ընել տուաւ ամէն անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր, թէ հաւատարիմ պիտի մնան իրենց լոյս-հաւատքին>>:

\* \* \* \* \*

Չանդրբեի մէջ, այդ միջոցին երկու աքսորեալ վարդապետներ կային. Գրիգորիս Վարդապետ Պալաքեան եւ Յովհան Վարդապետ Կարապետեան: Այս երկու հոգեւորականներուն պարտականութիւնն էր այդ տկարացած հայ մտաւորականները համոզել եւ երդում ընել տալ անոնց...

Այս երկու վարդապետներուն տեղ Ռուբէն Մեւակ ինքը կատարեց այս Սուրբ պարտականութիւնը...

Ռուբէն Մեւակի գոհաբերութեան ոգին օրինակ ըլլալը պէտք է՝ **հայ երիտասարդներուն...**

Մենք բոլոր մեր կեանքի ընթացքին աշխատեցանք հայ ժողովուրդին մէջ տարածել Ռուբէն Մեւակի գոհաբերութեան ոգին:

Եր մենք կը հաւատանք որ միայն Ռուբէն Մեւակի գոհաբերութեան ոգիով զինուած հայ երիտասարդութեան շնորհիւ կրնայ գոյատեւել **Հայութիւնը...**

31.07.2014 Nice

Յովհաննէս Չիլինկիրեան  
(Վրէժ Ռուբէնեան)



# Հայաստանի Կոչնակ

7 Յունուար 1922

ԵԼ

21 Յունուար 1922

TEMOIGNAGE DE SURVIVANT DE CANKIRI  
DU 24 AVRIL 1915

REVEREND HOVHAN GARABEDYAN

New-York  
USA

# Յեվհան Օ. Վրդ. Կարապետեան

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Կ Ո Ջ Ն Ա Կ Իւր Դ Բ (Ձ), Ք/Ե 1 9  
7 Գոստոս 1922

Նամուր ընթացքը, արդէն սկսած է միջադատան մտահոգութեան պատճառ դառնալ եւ Անդլիան յուզելէ վերջ՝ կ'սպառնայ նաեւ Ֆրանսասէր Ամերիկայի աչքը բանալու: Այս պահուստ Գրանսա է որ կը ջանայ ի դերեւ հանել Ուստիկովընի Գոստոսի Գրանսի Գրանսի: Եւ սակայն այս ամենը մեր կացութեան անմիջական դարձան մը չեն խոստանար: Երբ սովը եւ տառապանքը միասին կը փրձացնեն չքաւոր Հայաստանը՝ Կիլիկիան Հայութիւնը Ալեքսանտրէթի եւ Մերսինի չուրերուն մէջ ծփացող քանի մը թորփիլանաւերու վրայ հարկադրուած է խարտիել իրեն հոգմակոծ հաւատքը:

1920ը. միայն սա տարբերութեամբ որ երբ դեռ 1920ին՝ արտասահմանի Հայութիւնը կը շարժէր՝ հիմա անիկա կարծես աչքերը կը փակէ չի տեսնելու համար կացութիւնը ու ականջները կը գոցէ չի լսելու համար պարտականութեան մարտահրաւէրը:

1922ի աշխատանքը պիտի ըլլայ՝ մաքառիլ ոչ միայն մեր տեսանկիլ եւ անտեսանելի ոտխններուն դէմ՝ այլ նաեւ մեր ներքին անդաշտութեան դէմ որ աւելի անողորթ թնամի մըն է:

Գործէնք այս ոգւով եւ ո՞ր դիտէ, թերեւ 1922ին ծոցէն պիտի ծնին մեզ համար աւելի բարեբաստիկ օրեր:

Մ. Յ. ԱՆԱՆԻԿԵԱՆ

1921ն ալ կը վերջանայ վտանգի ամպերուն մէջ ինչ

## ԷՋ ՄԸ ԱՔՈՐԱԿԱՆ ՅԻՇՍԱԿՆԵՐԵՍ

(1915, Ապրիլ — 1918 Նոյեմբեր)

«Սեւակ»ի Անմահ Յիշատակին

Տեր Յովհան Օ. Վրդ. Կարապետեան ծնած է՝ Պրուսա, 1858 Յունիս 22ին: Իր հայրը՝ Վեր. Ղազարոս Կարապետեան՝ Զուիցերիոյ Պոլի քաղաքի համալսարանէն 1870ին շրջանաւարտ՝ աշխարհի մէջ ներկայիս այսրոյ Հայ Աւետարանական հովիւներու երիցագոյնն է տարիէն ու ձեռնադրութեամբ:

Տեր Յովհան Օ. Վրդ. Կարապետեան, աշխարհական անունով Յովհաննէս Ղ. Կարապետեան իր նախնական ուսումը ստացած է Պարտիզակի Ամերիկեան Բարձրագոյնը: Յետոյ յաճախած է Բաղէրք Գոլէն, Կ. Պոլիս եւ ստացած՝ B. A. Բ վկայական: Ամերիկա գալով Աստուածաբանութիւն ուսած է Հարք-Փրքսի նեմարանը եւ Նիւ Եորքի Նիւմիքն նեմարանը ընդունելով վերջինէն B. D. աստիճան: Հետեւած է նաեւ փիլիսոփայութեան եւ պատմութեան Նիւ Եորքի Գոյնմպիա համալսարանը ու շրջանաւարտ եղած՝ M. A. աստիճանով:

Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան գործին ծառայելու կոչում գգալով յարանաւանափոխ եղած՝ ու Ս. Դորոշ ընդունած է Ամերիկահայոց Առաջնորդէն: Ս. Էջմիածին մեկնած է 1914ին, ուր Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին կարգադրութեամբ նոյն տարւայ Յունիս 17ին Սարկիսազ եւ 18ին Արեղայ Դեռնոդրուելով Օգոստ. 2ին ալ վարդապետական մասնաւոր իշխանութիւն ստացած է Տ. Բագարատ Եպ. Վարդապետանէ:

Համաշխարհային պատերազմի նախօրեակին Պոլիս վերադառնալով կոչուած է Ամեն. Ս. Պատրիարք Հօր Անճնական Գարտադրութեան, Կէտիկ Փաշայի Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ Գարդարութեան եւ կրօնի ու բարոյագիտութեան ուսուցչի պաշտօններուն:

1914, Ապրիլ 11ին՝ թուրք կառավարութեան կողմէ ձերբակալուած է Պոլսոյ մտաւորականներուն հետ միասին ու աքաղարած Չանկըրը եւ ապա Ուշազ: Ստոյգ մահուանէ փրկուած է շնորհիւ Պոլսոյ Ամերիկեան դեսպանին միջամտութեան: Երեք տարի եւ յօքը ամիս տեսող աքաղարհէ ետք՝ 1918 Նոյեմբերին Պոլիս վերադառնալով վերաստանձնած է Կէտիկ Փաշայի Ս. Եկեղեցւոյն քարոզչութիւնը: Քիչ ետք կոչուած է

Պատրիարքարանի դիւանապետութեան պաշտօնին ու կեդր. կրօն. ժողովոյ Անդամութեան: Մայրագոյն վարդապետութեան աստիճան ստացած է Ամեն. Տ. Զաւէն Պատրիարքէն, յետոյ Առաջնորդական Տեղապահ անուանուած է Զմիւռնիոյ թեմին ուր պաշտօնավարած է 15 ամիս: Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն վարձարուած է վարդապետական լանգայաչափ 1920 Մարտ 15ին: Կրկին Պոլիս վերադառնալով երեք եկեղեցիներու քարոզչութիւնն է ստանձնած մինչեւ 1921 տարւոյ սկիզբը, երբ մեկնած է դէպի Երասխա ու ներկայիս կ'այցելէ Ամերիկա եւ առժամապէս կը քարոզէ Նիւ Եորքի Ս. Լուս. Մայր Եկեղեցին:

Չանկըրը չի հովիտը ոտողոզ դիտակին եղբրքը՝ բարտիներու դժուար ստուերին տակ՝ կը ճեմէինք Յունիս առաւօտ մը — Տօքթ. Ռուբէն Զիլիկիերեան (Սեւակ) ու ես, ըմբռնելով անդուդական վայելքերը՝ գաղտնիարային ընկերակցութեան: Խօսակիցս կը վերլուծէր անհրաժեշտ պայմանները աղաչան վերածնունդի: Արտարական կեանքի ճշտող մթնոլորտը՝ իր բոլոր սպառնական երեւոյթներով՝ փայտալոյս չէր մեր լատտեսութիւնը: Հակառակ իրարիստի Հայաջինջ քաղաքականութեան արհաւիրելի կիրարկումին՝ որու սկսել էինք տակաւ վերահասու ըլլալ շրջող դրոյցներու եւ քաղաքական ուրիշ ցուցմունքներու հիման վերայ, երկուքս ալ անխախտ կը պահէինք հաւատքը Հայ ասպազայի լուսազարդումին: Վայրկեան մը իսկ չէինք տարակուսիք թէ տիրող ճգնաժամային կացութիւնը վերջապէս դէպի Աղատութիւն պիտի առաջնորդէր Ազգը: Կը մնար նոր արշալոյսը ողջունել նոր կենսունակութեամբ:

Գաղտնիակիր զղերու շարքին մէջ Հայուն դրամած անվիճելի դիրքը աւելի եւս ամրապնդելու եւ միւս կողմէ դարձուր բունակալութեանց աղաչան նկարագրին վրայ դրոյժամ տխուր հետքերը ջնջելու համար կ'ըզգայինք ամենալուրջ գործունէութեան մը պէտքը: Կը մտածէինք թէ Հայ իրականութեան ամէն խաւերուն եւ շրջանակներուն մէջ ներարկուելու էր այլեւս դա-

բուս Ողբին, որպէս զի արդիանար ազգային մտայնութիւնն ու գործելակերպը եւ միանգամ ընդ միշտ ջանքախնդրութիւնն կապանքները կոյր աւանդամոլութեան: Բարեկարգչական ու շինարար այս աշխատութեանց տեսիլը դմեղ կ'ողբերէր ծայր աստիճան: Չէ՞ որ երկուքս ալ նուիրուածներ էինք նոյն նպատակին ու պատրաստ՝ ամէն զոհողութեան: Ծառայութեան շրջանը անշուշտ պիտի չուշանար: Հայութեան երկնակամարը մթազնուղ ամպերը սիտի փարատէին վերջապէս, ու զայն արիւնոզ շանթերն ալ յաղուրդ տային իրենց կատաղութեան: Իրերու բնականոն վիճակը երբ վերահաստատուէր ասպարէզ սիտի իջնէինք անյասպաղ:

Մեր խօսակցութիւնը հասած էր այս կէտին երբ Տօգթօրը յանկարծ լռեց: Հոգեկոն խոռվք մը նշմարեցի իր ընդհանուր արտայայտութեանը մէջ: Կը դիտէի որ կոկորդին մասնները կուլ տալու ծանօթ պրկումները կը կրկնէին ջղայնաբար: Ի՞նչ էր այն մտածումը զոր կը վարանէր արտայայտել: Հարցուցի իր յուզման պատճառը: «Հայր սուրբ», ըսաւ մեղմ ու խեղդուկ ձայնով, «ինձ այնպէս կը թուի թէ մահը հեռու չէ՛ բնաւ մեզմէ:» Նախադասութեամբ մըն էր արդեօք որ կ'ուշենար: Անմիջապէս կոչում ըրի իր քիչ առաջուան խանդավառ զգացումներուն եւ ըսի թէ իրանունք չունէր յուսահատ ըլլալու: Մասնաւորաբար ծանրացայ սատրամարանութեան վրայ թէ քանի որ շուրջ քսան տարի պատրաստուել էինք ծառայելու համար Աղբին կամ Եկեղեցիին պէտք էր թոյլատրուել մեզ զոնէ քսան ամիս գործել:

Մահուան հանդէպ ունեցած պաղ արիւնս սուսեցաւ արդիւնք ըլլալով տեսական հայեցողութեան ու հոգեկան տրամադրութեան՝ դժբաղդաբար չէր արդարանար այնքան մեղ շրջապատող իրերադարձութեանց տեսակէտէն: Ամիսի մը չափ առաջ մեր բաղդակիցներէն յիսուն երկու հոգի ճամբայ հանուած էին դէպի Տէր Զօր շախաղանց տխուր պարագաներու տակ եւ արդէն տարածայնութիւնները կը բազմանային իրենց Գաղատիայէ քիչ անդին խժոժալի կոտորման: Ո՞վ կրնար երաշխաւորել թէ յաջորդ առաւօտուն իսկ նոր ցանկ մը սիտի չի ծանուցանէր Զօր զրկուելիքներու որոնց մէջ զանուէրէնք նաեւ երկուքս կամ ուրիշ բաղդակիցներ: Ասկէ զատ, քաղաքին թուրք բնակչութեան մտայնութիւնը հեղհետէ կը լարուէր Հայերու դէմ, տեղի տալով անարգական նորանոր արտայայտութեանց: Տարակոյս չկար թէ մահուան ու կեանքի մէջ օրօրուելու շրջանն էր այս:

Տօգթօրը կացութեան ծանրութիւնը լրջօրէն ըմբռնած՝ չէր ուզեր բաժնուիլ մահուան տեսիլէն: — «Թշուառականները մեզ սիտի սպաննեն. բայց մենք սիտի չի մեռնինք. քանզի մեր գաղափարականները մինչեւ վերջը սիտի ապրին: Կարելի չէ՛ ջնջել այն ողբին որ մղեց մեզ Ամերիկայի կամ Չուիցերիոյ հանդիստէն հրաժարելով զալ ու օգնել մեր սիրեցեալ Աղբին: Ես կը հաւատամ թէ անմահութիւն է ծրարուած զոհարքեր ծառայութեան մէջ»: Այս բառերը արտասանուեցան ասպետական այնպիսի շեշտով մը որ յատկանշական էր Սեւակի մշտավառ կորովին: Գաղափարասպաստութիւնը նոր յաղթանակ մը կը տանէր այդ պահուն: Յուզիչ էր մեր տեսակցութեան արդիւնքը: Մահ կամ կեանք — որոշած էինք հաւատարիմ մնալ մեր կոչման: Հան-

դարտութեամբ սիտի սպանէինք անակնկալներու յայտնութեան:

Արտօրական կեանքը փորձաքար մըն էր արժանիքներու: Ամէն անձ ի յայտ կուզար իսկական իր գոյնով:



ՅՈՎՀԱՆ Ծ՝ ՎՐԴ՝ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

(Զմիւռնիոյ Առաջն. Տեղապահ եղած ատեն 1919-20)

Ոմանց համբաւին սյատուանդանը կը դայթէր անդարձ մինչ ուրիշներ նոր կը կերտէին կոթողները առինքնող հիացման: Փոխադարձ զնահատումի այս առիթը կ'առաջնորդէր կազմութեանը բարեկամութեանց լաւագոյններուն: Տառապանքով նուիրագործուած այս եղբայրակցութիւնները տաճարներ էին մխիթարութեան ուր հաւատք, յոյս եւ սէր կը բոցավառէին լուսանաճանջ՝ կարծես իբր հակապատեհներ մթնոլորտը պատող անարդարութեան խաւարին: Գայցը էր արդարեւ ցորեկը բոլորուիլ ծառերու հովանիին տակ եւ խրախուսել զիրար՝ մինչ զիւրը անցուն ժամեր կ'օգտագործուէին կացութեան մասին աւելի լուրջ վերլուծումներով:

Անդամ մը՝ հաղիւ շարթ մը ետք այն տեսակցութենէս որու անդրադարձայ՝ երբ նստած էի Զանկըրըլի հանդիպակաց բլրակներուն բացուող պատուհանին առջեւ, ու կը մտածէի զիս կախուլս այն սպառնալիքին վրայ որ նոյն առտուն՝ ներկայութեան պարտաւորիչ արձանադրութեան համար ոստիկանատուն զացած միջոցիս ըրած էին չուկային մէջ երկու անդուստր թուրքեր, յանկարծ սենեակ մտաւ Տօգթ. Զիլինկիրեան: Սոխորականէն աւելի մտայլ էր կերպարանքը: «Առաջարկ մը ունիմ ընելիք,» յայտարարեց առանց յառաջընթաց խօսքերու: «Կը լսեմ թէ Գաղատիոյ կողմերը իսլամացած են կարգ մը Հայեր: Չեմ ուղեր որ մեր ընկերներէն ոեւէ մէկը այդպիսի տկարացում ունենայ

ապագայ հաւանական ճնշումներու առջև, ուստի կը թելադրեն որ դուռն իբր հողերտրական կանչես հոս գրտնուողները եւ կրդուս առնես իւրաքանչիւրէն թէ հաստատ պիտի պահեն Գրիստոնէական հաւատքինը:

Չանացի Կանդարտեցի Տօքթօրը եւ բացատրեցի անպատեհութիւնները որ կային աշորինակ արարողութեան մէջ, նկատի ունենալով մանաւանդ ժամանակին փափկութիւնը եւ մեր ընկերները անհարկի յուզման չի մատնելու անհրաժեշտութիւնը: Համակերպեցաւ չի պնդել իր տեսակէտին վրայ սակայն այդ միջադէպը կարծես կանխաձայնութիւն մըն էր մօտալուտ արասփներու:

• • •

Շատ շանցած կացութիւնը ստացաւ ամենասուր հանդամանք: Փողոցի Թուրք տղաքը լաւագոյն ջերմաւափն էին Հայաստան մոլեգնութեան: Լուսանքի սովորական տեղատարափը չիմա կը փոխուէր բիրտ քարկոծման: Կոտորածի նախապատրաստութեան գրոյցներ կ'սկսէին աւելի ազատօրէն շրջիլ: Գիւեր մը ինքնապաշտպանութեան միջոցներու մասին խորհրդակցելու վրայ էի Պ. Տիրան Բէլէկեանի հետ երբ Տօքթ. Չիլինկիրեան անակնկալ այցելութիւն մը տալով յայտնեց թէ եկած էր ծանրակշիռ յայտնութիւններ ընելու: Փոքրիկ կանթեղին աղօտ լոյսը իր տոգունած ղէմքին աւելի ամպոտ մէկ կիսաստուերը կը շրջադէպ պատին վրայ: Պահ մը լուսութիւն տիրեց սենեակին մէջ: Իրարու նայեցանք հոգեկան խոր ներքնաթափանցումներով: Վերջապէս լսեցինք դաւադրութեան մը դարհուրելի նկարագրութիւնը: Տօքթօրին յուզեալ շեշտը դեռ կը հնչէ ականջիս փղծկեցուցիչ հակադրեցութեամբ:

Չանկըրըյի մէջ կատապան մը կար որ ծանօթ էր իբր հնդկական սանձարձակ արարքներու: Իքթիստական ոճրասպարտ խմբակը յանձին իրեն զտած էր հլու գործիք մը զոր կը շոյէր ու կը շիպեցէր մեծ հեռատեսութեամբ: Կառապան Իսմայիլի մէկ աղջիկը վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուած էր Տօքթ. Բարեղ Տիւանեանի ձեռքով ու վերջինին Պուլիս դառնալէն ետք հիւանդը փոխանորդաբար կը դարձանուէր Տօքթ. Չիլինկիրեանի կողմէ: Արդ, ըստ վերջինին պատմութեան, նոյն օրը, երբ դացած էր հիւանդին այցելելու, կառապանը յանդղներ էր բանտարկել զինք տան խաւարամած գետնայարկը պահանջելով որ իսկոյն իսլամանայ: «Ինձի նայէ» պրտացեր էր ճիւղը Տօքթօրին երեսն ի վեր, «ձեզ ամէնքը Թիւնէյի մէջ պէտէ սպաննենք: Քեզ սիրելուս համար կ'ուղեմ կեանքդ փրկել: Հազգ Տիւնը ընդունէ»: Հակառակ պարագային աղէկ դիտցիր որ կտոր կտոր պիտի ըլլաս»:

Տօքթօրը հաւատարմ իր առջի օրուան ուխտին՝ արիարար դիմադրեր էր տրամարանութեան ուժով: Կառապանին յամառ պնդումը իր առաջարկին անմիջական գործադրութեան մասին մաքառումը երկարեր էր երկու ժամէն աւելի: Ծանձնամային այս դրութեանէն ճողորկելու համար Տօքթօրը դադարաբար յղացեր էր առաջարկելու կառապանին որ թոյլ տայ իրեն քաղաքի գինտորական հրամանատարին հետ տեսակցել նոյն ուղղութեամբ: Օմիկը աղատելու այս հնարքը յաջողութեամբ պահուած՝ ա՛հա՛ եկեր էր ամենուս ճակատագրին հետ սերտօրէն կապակցեալ նոր կացութեան վրայ խորհրդակցելու: Ո՛վ կրնար այլեւս անդիտանալ

վայրկեանին վճռականութիւնը: Կ'զգայինք թէ զոյութեան նժարը դէպի գերեղման կը հակէր աւելի քան երբէք: Զիրար սրտապնդող մէկ քանի բառերէ ետք Պ. Բէլէկեան յիշեցուց թէ յաջորդ օրը Բամազանի Պայլամ ըլլալով պատշաճ էր շնորհաւորական այցելութիւն տայ դինտորական հրամանատարին, եւ թելադրեց որ Տօքթօրն ալ ընկերանայ որպէս զի կառապան Բամայիլ ղէթ պատրանքը ունենայ իր բաղձանքին իրագործման: Անդրադարձանք նաև Չանկըրըյի փախուստ տալու կարելիութեանց բայց չի յաջողեցանք եղբակացութեան մը յանգիլ: Կար կէտ մը սակայն որու շուրջ կատարեալ համաձայնութիւն կը տիրէր եւ այդ ալ վէր բռնել էր ամէն զնով դրօշը Գրիստոնէական հաւատքին: Բէլէկեան խաչակնքեց երկիւղածութեամբ իսկ Սեւակ իր բըռունցքը ցցեց այն միմարէին ուղղութեամբ որու պատրզամէն խուլտո ձայն մը կը բարձրանար նոյն պահուն դէպի Ալլահն Իսլամութեան:

• • •

Յաջորդ Կիրակի առաւօտուն Չանկըրըյի Հայոց փոքրիկ Մատուռին հնադարեան կոշնակը աղօթքի իր հրաւերովը մէկտեղ կարծես ահազանգը կը հնչեցնէր մահուան անխուսափելիութեան: Տեղական փոքրաթիւ Հայութիւնը որ ականատես էր եղած Պոլսէն խլուած աքսորական խումբին՝ օրէ օր կոտորակուելուն՝ կը շարունակէր ջերմեռանդօրէն աղօթել մաքառներուս փրկութեանը համար: Քաղաքին օձապտոյտ ու նեղ փողոցներէն լուռ եւ անշուղի քալուած ջով նոյնպէս դէպի Մատուռ կ'ուղղուէինք բաղդակից երեսուն եւ հինգ ընկերներ — վերջին ներկայացուցիչներս Այաշ ու Չանկըրը ջրուած երկու հարիւր իննսուս մօտ մտաւորական ու եռանդուն Հայութեան: Արհաւիրքը կրօնական եռանդ էր արծարծած ամէն սրտի մէջ: Աւելի հիմնական պատճառը սակայն հրահրուող արթնութեան՝ աղգային բոլոր խաւերու եւ հոսանքներու մէջ տիրող ճմարիտ եղբայրակցութիւնն էր: Հասարակաց թանամիտն ղժոխային զաները ջնջած էին ներքին ամէն խորականութիւն: Միասիրտ ու միակամ ինքնապաշտպանութիւն փորձող մեր խումբը բնական կը զտնէր իր ներշնչումը քաղել այն եկեղեցիէն որ խորհրդանշած է միշտ աղգային միութիւնն ու դադարաբաշտպանութիւնը:

Չանկըրըյի Չօրանոցին գետնայարկի մէկ սրահը աղօթավայրի վերածուած էր բանտարկութեան շրջանին: Հոն ամէն իրիկուն Հանգստեան Ժամանակ զնկեսցէ՞ի պաշտաման Կարդը կը կատարուէր ու ճէր Ողորման՝ կ'երգուէր անօրինակ ջերմեռանդութեամբ: Իսկ աւելի կտրեց քաղաքին անշուք այլ հնարոյր Մատուռը դարձեր էր կիրակնօրեայ հաւաքավայրը իրենց հեռաւոր սիրելիներուն կարօտովը տողորդ ու նահատակութեան սեմին վրայ անյողղողը կանգնող նոյն վտարանդի խումբին:

Վերայիշեալ Կիրակին Ս. Պատարագի մատուցումը արցունք կը խլէր ամէն աչքերէ: Մթնոլորտը եկեղորականացած էր դէպի սպանդանոց առաջնորդուած մեր պատուական ընկերներուն սուզովը: Կարծես Գրիստոնէական հալածանքի առաջին դարերուն մէջ կ'ապրէինք: Մատուռը իր ցած ձեղունով ու խորհրդաւոր լուսաւորումով գետնադամբանի (catacomb) տպաւորութիւնը կը թողուր իսկապէս: Մատուռին յառաջակող-



ՄՏԱԾՄԱՆ ԺԱՄԵՐ

ՆՈՐ ՏԱՐԻԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Բնութեան մէջ զօրութիւններ կան որ անհազոչ են, աղմկայոյզ են եւ աւերիչ ու կործանարար, ինչպէս երկրաշարժը, հրաբուխը, ջրհեղեղը: Զօրութիւններ ալ կան որ կը դործեն լռիկ, մեղմիկ ու հանդարտիկ, եւ կը շինեն, կը կենդանացնեն, կը գեղեցկացնեն, ինչպէս արեւին: շողերը, առաւօտեան ցօղերը, եւ օդին հեղիկ հոսանքները: Լռիկ կը փայլին աստղերը կրկնակամարին վրայ, լռիկ կը թաւալի երկրագունդը անընդմեջ մէջ, լռիկ կուգան ու կ'երթան տարուան շրջա եղանակները, լռիկ կը ծագի ու կը մարի արեւը իր ընթացքին մէջ, լռիկ կը դործեն ձգողութեան քարշղուութեան մեծ ոյժերը: Ասոնք են սակայն որ կուտան բնութեան կեանք ու գեղեցկութիւն:

Մեր կեանքին վրայ ներգործող ազդեցութիւններն ալ աս երկու տեսակէն են: Զօրեղ, խորտակիչ եւ յանկարծահաս ազդեցութիւններ կան որ մեր հոգիները կը խողեն, եւ կեանքը տակն ու վրայ կը շրջեն, ինչպէս անակնկալ դժբաղդութիւններ, ցնցող դէպքեր, դառնակսկիծ հիւանդութիւններ, թնամիլի թունալից նետեր, սրտակեղեք մահեր եւն: Սակայն ազդեցութիւններ ալ կան՝ լռիկ ու անզիտակ ազդեցութիւններ, որ անդալի կերպով կը դպչին մեր կեանքին, եւ կը կադուրեն, կ'աղնուացնեն, կ'ողբերեն զայն, եւ մեր մէջ կ'աճեցնեն, կը մշակեն ճշմարիտ մարդու ընտիր ձիրքերն ու յատկութիւնները: Անուշ նայուածք մը, քաղցր ժպիտ մը, հրճուալի խօսք մը, գեղեցիկ պատկեր մը, խորհրդաւոր դիրք մը, բարեկամի մը ներկայութիւնը, նկարագրի մը գեղեցկութիւնը՝ ասոնք ամէնը ինչ լռորիկ ազդեցութիւններ են որ կը ձգեն մեր կեանքին վրայ, ու անզիտակցարար, անդալիօրէն կը շինեն եւ կը կազմաւորեն մեր ներսի մարդը:

Կեանքը կը թուի ինչ է, եւ կը թուի ինչ իր լայնագոյն առումովը՝ ուրիշ բան ըսել չէ, այլ միայն դուրս բերել ինչ որ մեր մէջը կայ աղնիւ, բարի եւ գեղեցիկ: Կը թուի, վարդին պէս ամիւ, բացուիլ, եւ բուրել ըսել է: Կեանքի կը թուի թեան մէջ ամենէն հզօր դերը լռիկ եւ անզիտակ ազդեցութիւններն են որ կը կատարեն: Տանը մէջ հօրը կամ մօրը մեծադոչ յանդիմանութիւնները, երկարապատում յորդորականները, եւ քարոզանք ման խրատները չեն որ կը կը թեն մանուկը. ասոնք երբեմն յաւէտ քանդիչ ազդեցութիւններ կը դործեն: Այլ ծնողաց կեանքէն ու նկարագրէն բղխած լռիկ ազդեցութիւններն են որ անզիտակցօրէն կը շինեն մանուկին կեանքը եւ կը կը թեն, կը կերտեն անոր միտքն ու հոգին: Դպրացի մը ուսուցիչը որքան ալ հանճարամիտ ըլլայ, դաստիարակչութիւնը որքան ալ խորախորհուրդ ըլլան եւ կարգն ու կանոնը որքան ալ խստապահանջ, ասոնք չեն որ կը դաստիարակեն ուսանողը, այլ ուսուցիչին անձին, դպրացիին մթնոլորտին լռիկ ու անզգալի ազդեցութիւններն են որ կը դպչին ուսանողին կեանքին եւ դուրս կը բերեն անոր մէջ ծածկուած խորհուրդի եւ նկարագրի գեղեցիկ ծաղիկները: Նոյնպէս ալ կիւղեցիին մէջ՝ քարոզչի մը պերճ խօսքերը, ճօխ խորհուրդները եւ աղմկայոյզ դործունէութիւնները բան մը չեն արժեր, ժողովուրդին կեանքին չեն դպչիր անոնք. թէ որ ասոնց բոլորին ետեւը չկենար մաքուր նկարագիր մը,

մը՝ դասին առջեւ ասպետական դիրքով կանգնած էր նոյն ինքն Տօքթ. Զիլինկիրեան: Կ'ազայի թէ ինք այդ վայրկեանին կը մարմնացնէր մեր ցեղին հաւատքի դիպրադոսթիւնը: Երկիրի նշոյլը անգամ չկար իր առնական դէմքին արտայայտութեանը մէջ: Երբ խորանին վարդոյրը երկրորդ անգամ բացուեցաւ ու սարկաւազը ճերկիւղիւ եւ հաւատով թառաջ մատի՛ք եւ սրբութեամբ հազորդեցարուքը եղանակեց, Աւուակ առաջինը եղաւ Ս: Հազորդութիւնը՝ ճաշակող:

Չեմ կրնար պահ մը իսկ ժողովուրդըսնել իր այդ օրուան գրաւիչ վեհութիւնը: Կը թուանէր ինք այն յաղթական կաղնիին որու բունը տապալել կը պատրաստուէին փայտահատները բայց ինք անվրդով կը դիտէր փայլաւն քանդիչ իր արմատներուն խորունկութիւնը դրւալ աղբիւրներէ ոտոզուած՝ երաշխիքը կուտար վերստին բողբոջման: Այսպէս ալ Սեւակ վախ չունէր իր դահիճներէն: Ասոնք կրնային իր մարմինը անշունչացել բայց իր հոգին յաւիտեանական պատգամներ սլոտի ունենար Հայութեան ականջին հնչեցնելիք:

(Մնացեալը յաջորդով)  
ՅՈՎ ՀԱՆ Ե. ՎՐԴ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՀԵՌԱՒՈՐ ՍԻՐԱԿԱՆԻՍ

Ս...ին

Չէի խորհեր թէ օր մը կրկին ձայնդ պիտ' լըսեմ, եւ ստանամ նամակներդ, տարիներով ընդհատուած, Բոյոբ քաղցրիկ տողերուդ, կաթած փափուկ քու սիրտէն,  
Հեշտամէք լուռ վայելիլ չէի՝ խորհեր, ի՛մ սիրած...:

Ինը տարի է անցեր, ա՛յն օրէն երբ հեռացայ, Երկինքներուդ արեւէն, վերջին անգամ չը տեսած. Գու կաթագին դէմքդ նուրբ, բայց բարի սիրտդ իբր ընծայ,  
Անգին իմաստ մը ինչպէս խոհերուս մէջը մընաց:

Ո՛վ հեռաւոր Սէր, ինչո՞ւ կը վերյիշես զիս դարձեալ, եւ անցեալի երազին հէքեքեքով արբեցած...  
Կ'ուզես հագույս ու մտքիս երանուէտ յոյզեր տալ, Կ'ուզես ըլլալ նոր զգին իմ սէրերուս կորուսած:

Անկէ ի վեր, ի՛նչ հողմեր, փոթորիկներ են անցեր, Սիրտիս դաշտին վրայէն, ու հոգիիս երկինքէն, Փլատակին վրայ ծաղիկ եթէ կրնայ բուսնիլ դո՛ւ,  
Սէրս լոկ կրնայ թարմանալ քու Արեւիդ համբոյրէն:

Նո՞յնն են արդեօք ձեռքերդ, շուշամագեղ ու փափուկ, եւ բարութիւնն աչքերուդ որ անձնուէր մօր մը պէս, Լուր կը հսկէր քայլերուս, կ'ըլլար աստղը սիրտիս մութ,  
Նո՞յնն ես արդեօք, հի՛ն աղջիկ՝ շնորհալի՛ ժպտերես...:

Ինը տարի է աղուարս ա՛յն օրէն երբ հեռացայ, Երկինքներուդ կապոյտէն, վերջին անգամ չը տեսած, Գու կաթագին դէմքդ նուրբ, բայց բարի սիրտդ իբր ընծայ,  
Անգին իմաստ մը ինչպէս խոհերուս մէջը մընաց:  
ԼՈՒԹ ԵՐ ԿՈՐԿՈՏԵԱՆ

24

հոգոյ ԿԻ (ՅԱ), Քի 3 1912  
21 Յստիս 75

Հետզհետէ ու շարունակաբար պիտի ամբանայ ազգերու  
և ցեղերու փոխադարձ վստահութիւնը, աստիճանա-  
բար պիտի աճին միջազգային բարեկամութիւնն ու ան-  
կեղծութիւնը, և վերջապէս պիտի դայ համաշխարհա-  
յին խաղաղութեան և եղբայրութեան երազուած դա-  
րաբանը:

Անկոփեց ԱՇԻՐ

(ՎԵՐՋ)

ԱՂՕՐԻ


Աչքերուս մէջ, Տէ՛ր, ցաւը կը մրքի,  
Այդ ցաւէն զայնք տիեզերք փլչի:  
Բոլորին ցաւով դեռ վա՛ղ տըւայտեր,  
Բոլորին ցաւը լացեր անընկեր:

Աչքերուս խորքը կարմիր պիտի գնի.  
Անգուսպ կռակներ գրանկս եմ չարչարեր,  
Տէ՛ր, վերջին հեւքը ուր մարդ կը հատնի,  
Բոլոր շրքներէն կորզեր եմ գաղտնի:

Գութս անգոր էր եւ գութս կարելի էր  
Աւերակ մըն եմ ուր սիրտս կը հեւայ  
Իր հոգեկարգին, մահուան համար դեռ:

Բայց պիտի ուզեմ վերածնիլ, Տէ՛ր,  
Օ՛հ, վերածնիլ շունչէդ գո՛ւր մ'անքիծ,  
Եւ կամ ցատումէդ կայծակ մը հուրհեր:

ՊԷՍԷ



ՍՊԱՍՈՒՄ

Սեէեակս է լո՛ւս, երազներով քաթաւուն,  
Խո՛ր գիշերուան լուսքեան վրայ ծփալով,  
Հո՛վ մը օտար, հեռուներէն կը փարի,  
Գգուանքներու կարօտ, իմ մաւք հոգիիս:

Ծարաւ տե՛նչ մը կը բարձրանայ խար սըրտէս.  
Ու կը դիտեմ սպասումիս մէջ ի գո՛ւր...  
Աստղերն յստակ կը կաթկըթեմ մեղմօրէն,  
Խաղաղութիւն մ'երագատենչ աչքերուս:

Գիշերն ի՛նչ փոյթ. դեռ կըսպասեմ անձկագին.  
Մինչ նըւագներ հոգիիս մէջ կերկարին.  
Ու լուսինն ալ յա՛մր յա՛մր քայլերով,  
Մաւքին մէջէն մահուան կ'երթայ տրտմագին:

Թախիծիս հետ, դեռ կըսպասեմ յոյսերուս.  
Ո՛չ մէկ նշոյլ... Աստղերը լսկ կը նային...  
Ու կը տանին զիս պատրասեմով մ'հեշտագին  
Դեպի փառնաքն անդարձ փոխշող երագիս:

ՍԱՐՕ

Բարիկ



ԷՋ ՄԸ ԱՒՍՈՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

(Շարունակութիւն եւ վերջ)

Նոյն դիշեր Պ. Տիրան Բէլէլիկան ծախսարարիկ նըս-  
տած էր այն սենեակը ուր վեց ամիս միասին ապրեցանք  
սիրոյի մտերմութեամբ: Առջի շարժուն յաջողեր էի  
զաղտնարար լուր դրկել Պոլիս որ Եթէ մինչև տասը օր  
կարելի չլլար Չանկըրը մնացողներու կեանքը փրկել,  
մահը անխուսափելի պիտի ըլլար: Մերունազարդ հայ-  
րկիս՝ խորապէս վրդոված հրաժեշտի առջ նամակէն՝  
անուշա նորանցող իմ մտնէր էր կատարած դեսպանա-  
տանց մօտ: Ի՞նչ արդիւնք ձեռք բերուած էր արդեօք:  
Ա՛յս էր նիւթը որու մասին կը խօսակցէինք:

Բէլէլիկան չէր ծածկեր իր յուստեսութիւնը: Դեռ  
թարմ էր իր մտքին մէջ այն զաղտնի տեսակցութիւնը  
զոր մէկ քանի օր առաջ ունեցեր էր Գասթէմունիի-նա-  
հանդին սլաւոստանի կուսակալ Բէլիս փաշայի հետ որ  
իրը Աղատ Որմնադրական ընկեր անվերապահօրէն  
յայտնէր էր Երևասարդ Թուրքերու Հայ Ազգի բնա-  
ջնջման ծրարի մանրամասնութիւնները: Պարզ էր  
այլևս թէ իւրաքանչիւր քաղաքէ առաջին անգամ աք-  
սորուած աչքառու դէմքերը մահուան դատապարտեալ  
էին մասնաւոր տոմարով: Ասոնք պէտք էին բնաջնջուի  
կառավարական խիստ հակակշոր տակ իսկ մնացեալ  
խումբերը դէպի մահ առաջնորդուելու էին ընդհանուր  
սարսափներով: Եթէ մեր խումբէն մէկ քանիներ սկիզ-  
բը վերադարձուեր էին Պոլիս՝ այդ շնորհ արգիւնք էր  
Մայրաքաղաքի օտար շրջանակներէ ի դժբո զրոնած բա-  
ցատիկ ճնշումներու և կարգ մը անձնական կապակ-  
ցութեանց: Թէ ի՞նչ փրկութիւն կրնար տակաւին յու-  
սացուիլ մեզ համար Հայաստանի քաղաքականութեան  
ա՛յնքան յոռաջանցած ու բորբոքեալ այդ վայրկեանին՝  
դժուար էր դուշակել:

Կէս դիշերուան մօտ փողոցի դրան մեկտօրէն բաղ-  
խուիլը լսեցինք: Տան մուտքը հաստ դերանով մը ամ-  
բացուցած էինք իբր կանխադրուութիւն: Կը խորհէինք  
թէ կոտորածի պարագային երբ յարձակում դործուէր՝  
կրնայինք մինչև դրան բռնարարուիլը մէկ երկու վայր-  
կեան շահիլ տանը ետեւի կողմէն փախչելու համար:  
Սնձայն քայլերով իջանք վար ու հարցուփորձէ ևտք  
ներս ընդունեցինք տեղական Հայերէն պատուական բա-  
րեկամ մը:— «Ողջո՛յն, խե՛ր ըլլայ» բառերով դիմաւոր-  
եցի դինք:— «Աստուած օգնական» պատասխանեց:—  
«Աստուած սահապան» յարեցի: Եկեղեցականի ու աշ-  
խարհականի միջև բարեւելու հնարարեան այդ ոճը  
Երբէք այնքան նշանակալից չէր թուած ինձ որքան ար-  
հաւիրքի այդ երեկոն: Սովորական ժամանակ կուսա-  
կրօն եկեղեցականին ուղղուած «Աստուած օգնական»ը  
իմաստը ունի դորութիւն հայցելու որպէս զի կարելի ըլ-  
լայ ստանձնուած լուծը համբերութեամբ տարուիլ: Այդ  
իրիկուան նոյն մաղթանքը կը թուէր մէկ կողմէ կողմ  
ըլլալ զերբնական միջամտութեան և միւս կողմէ ծաղ-  
րը կարծես անել մեր դրութեան:

Բարեկամնիս ևկամ էր իմացնելու թէ քաղած ստոյգ  
տեղեկութեան համաձայն քաղաքին ոստիկանապետը  
ծածկադիր հեռագիր մը ստացեր էր Պոլսէն՝ աքսորա-  
կաններու վերաբերմամբ: Այդ տեսակ հեռագիրներ  
չառ էին հասած անցեալին մէջ կորդելու համար մեր  
խումբէն ընտրելագոյն տարրեր և առաջնորդելու դա-

նոնք դէպի սուանդանոց: Ի՞նչ անակնկալ կ'սպասէր մեզ արդեօք առաւօտուն: Անկարելի էր չի վրդովուիլ: Անքուն դիշերներու շարքին վրայ հստմըն ալ կուգար աւելնալ: Յուզումը լուսթեան կը դատարարէր զմեզ: Խոհանոթիւն կը սեպէինք ճրագն ալ մարել: Մայրի մէջ կը նստէինք անշարժ ու տեսակ մը փրկութիւնն անէացումով ազատողոյն թո՛ղք կը պարզեւորէր մեր հոգեկան վերացումներուն: Բուրբովին լքուած չէինք ըզրպէս սակայն ինքզինքնիս — մանաւանդ երբ կարեկցութեամբ թրթուուն մէկ քանի աստղեր իրենց՝ շար կը կաթեցնէին մեր պատուհանէ ներս:

Երկուշաբթի առաւօտ ստիկաններ շրջանը կ'ընէին աքտորականներէն բնակուած տուններուն՝ իւրաքանչիւրս կառավարչատուն հրաւիրելու համար: Պոլսէն յատկապէս դրկուած ճիւղներ էին ասոնք Չանկըրըյի մթնոլորտը թունաւորող: Հայոց դէմ կը հայհույէին շարունակ որպէս դաւաճաններու եւ պատճառ կը դառնային սննդի զրդուութեանց: Այդ օրը սակայն երեսներն ժպտուն էր աւելի: Զրոյց մը կը շրջէր թէ աղատութիւն պարգևուած էր մեզ քսո՞րի կաշկանդումէն: Ոստիկաններու զուարթութիւնը չէր կրնար անշուշտ անտիկ զատճառուած ըլլալ: Ի՞նչ նոր դաւադրութիւն թաքնուած էր արդեօք իրենց գոհունակութեան կտու: Վերջապէս ուղղուեցանք դէպի կառավարչատուն ուր ստիկանապետը Պոլսէն հեռադրուած անուանացանկ մը կարդալէ կտք հանդիսաւորապէս ծանոյց թէ բարեկրնամ (°) կառավարութիւնը ներքում շնորհած է այդ անձերուն արտօնելով որ Պոլսէն դատ թուրքիոյ ուղած քաղաքին երթան ու բնակին: Աւանդական «Ալլահ Էօմիւրէր վերսիմը» ստիկուած էինք արտասանել՝ մըտովի զայն վերածելով անշուշտ «Ալլահ Էօլիւմլէր վերսիմը»:

Կարգացուած անունները՝ հոն գտնուողներուս համեմատ՝ երեսուն եւ հինգ էին թուով բայց հինգ անունի սխալով մը կը յիշատակուէին նախապէս Պոլիս վերադարձուած ընկերներ՝ մինչ մեր մէջէն բացը կը մնային Դանիէլ Վարուժան, Տօթթ. Ռուբէն Զիլիկիլիբեան, Վահան Գէհեան, Օննիկ Մաղաղաճեան եւ Յարութիւն անուն հացադո՞ք մը: Իսկոյն խնդրեցինք ոստիկանապետէն որպէս զի բարեհաճի թիւրիմացութիւնը հարթել հարկ եղածը Պոլիս տեղեկագրելով: Վստահ էինք թէ վերոյիշեալ հինգն ալ սխտի կարենային ազատիլ մեզի հետ: Բայց չարասիրտ պաշտօնեան որ լաւ դիտէր շնորհուած ներումին (°) իսկական իմաստը ըստիպուած կ'զգար տարբեր ընթացքի հետեւիլ:

Հոս միջանկեալ ըլլալով պէտք է յիշել թէ Հօրս դիմումներուն վրայ դեմպան Մօրկընթաւ փութացեր էր թալէպարի մօտ եւ պնդելով թէ Չանկըրը անմեղ Հայեր կան գթութեան արժանի՝ պահանջեր էր ազատ արձակել զանոնք: Զարգարար դադանք մերժել էր Պոլիս վերադարձնել մեր խումբը բայց բարեպատիբ դիջողութիւնն էր ըրեր արտօնելու՝ թուրքիոյ մէջ մեր բնակավայրը ընտրել յալաբ: Աւերելոյթ բարիացակամութիւն ցոլացնող այս թոյլատուութիւնը դիւային միջոց մըն էր մեր քնաջնջումը փութացնելու: Հրոսակներ պատրաստ էին ամէն ճամբու վրայ: Ո՞ր Հայը կրնար ունէ միջոց կտրել այդ օրերուն առանց դէպի մահ խիղախելու:

Արդ, Չանկըրըյի ոստիկանապետը ստոյգ կը նկատէր ներքեան արժանացողներու մահացումը: Կը խորհէր թէ մեք տեղւոյն ճշտի մթնոլորտէն զուլուած սխտի անապարհէնք հեռանալ դէպի երկաթուղոյ դիժը կամ ծովափը: Իր արբանակներէն շատեր կը մօտենային մեզի ու կը թելադրէին որ մեկնինք: Գալով այն հինդին որ ստիկուած կ'ըլլային Չանկըրը մնալ ու այդպէսով թերեւս փրկուիլ, հարկ էր զանոնք ալ տեղափոխելու ճարը գտնել: Ոստիկանապետը իր դաւը լարեց ու յաջողեցաւ: Պոլսէն նոր հրահանգ մը բերել տալ Սեւակի եւ ընկերներուն իր բանտարկեալ Այաջ փորապարտմը հրամայող: Նոյն օրը եւ ալ խիստ նշանակալից նստակ մը ստացայ հօրմէս որ ըստ ժամանակի պահանջին թուրքերէն դրուած էր ու հակառակ դրաքննուած ըլլալուն Զինուորական Իշխանութեան կողմէ՝ կը սարունակէր հետեւեալ պարբերութիւնը — «Ձմիւնիս երթալու մասին ճառքան Ապահակեան էֆէնտիի հետ տեսակցելը կը յանձնարարեմ. եթէ յիշեալ ստորոնը ստաշած նկատէ կրնաս մեկնել: Ձայս հաղորդագրութիւնը կը փորձէր վճռապէս հասկցնել կեղծ ներումէն չօգտուելու անհրաժեշտութիւնը: Երեսուն ընկերներ կրնայինք թերեւս հիւանդութիւն պատճառարանելով ատեն մըն ալ հոն մնալ կամ նոյն խիլ Չանկըրը բնակավայր ընտրել շնորհուած արտօնութենէն օգտուելով:

Բայց Սեւակի, Վարուժանի եւ միւս երեքին սարգան հիմա կը տարբերէր: Մեկնումը ստիպողական էր հաշիւուած: Գծուարաւ յաջողեցանք մէկ ու կէս օրուան յետաձգում ձեռք բերել: Քաղաքային կառավարչի Տեղապարսը իր զինուորական պատիւին վրայ կ'երդնուր ճամբաներու ապահովութիւնը: Կը պատահէր որ այս հաւաստումէն միամտաբար քաջաւերուէին ու թրապատ ընկերներ եւ իրենք ալ վարձէին երկու կամ ք ընկերանալու համար մինչեւ Գաղատիա Սեւակի խումբին Մեկնումի սյուրաստութիւնները մինչ կը տեսնուէին Սեւակի կուլար խնդրել ինձմէ որ Աստուածաշունչ Մայրեան մը հայթայթեմ իրեն համար: Անմահութեան ծարաւի իր հողին կը փափաքէր աստուածային ճամբանութեանց լոյսին մէջ թեւածել: Միակ նմոյցը որ քովունէի յանձնեցի իրեն: Յայտնեց թէ ծայրէ ծայր սխտի կարդար զայն:

1915. Ողոստոս 13ը որ Հինգշաբթիի կը զուգարկուէր չարաբաստիկ ու եղբրական շունչով էր տողորուած: Առջի դիշերը յատկանշուեցաւ ահազուցիկ երազներով որոնք խտովեցին շատերուս քունը եւ քանից արթնացան զմեզ ընդոստ: Կէս դիշերին՝ մեր տան աքաղաղը երեք անգամ իր ձայնը հնչեցուց շարագուշապի զերը կատարելով կարծես: Արշալոյսը կը յամնար խաւարը փարատել: Արդեօք կ'ամհա՞ր լոյսով ուղղել ոճրաբեմը ուր հանճարներ սխտի խողիողութիւնն ու հատարակութեան հսկայ կոթով մը սխտի բարձրանա իրր յախտնական բողոք ընդդէմ թուրք բարբարոսութեան:

Մութնայրուտուն արդէն հաւաքուած էինք Չանկըրըյի կամուրջին գլուխը ողջերթ մաղթելու համար մե տարարապղ ընկերներուն: Կառավարութիւնը երկրկար պատրաստած էր Սեւակի խումբին համար ու մէ մէկ ալ պահակ նշանակած: Միւս ութը ընկերները յոստիար եղան իրենց վարձաւ: Կառքերէն մէկուն չերկ:



26

նախօր ու վերջին պահուն ստիպուեցան ճամբորդութիւնն յետաձգել: Գեղար կ'ըլլար սակայն Այաշ մեկ նոյ Հինգ ընկերներէն բաժնուի: Ողջագորուեցանք կրկնակի համարներով: Ոստիկանները վերջապէս հրամայեցին մէկդէի ջաշուի: Կառքերը անցան ճակատադրային կամուրջէն ուղղուելու համար դէպի Թիւնէյ . . . . Մահուան արշաւանքն էր այս:

Օրը տարաժամած էր, քանզի ու բուր կ'սկսէին երդիքներու վրայ թափելու մերթ մթնոլորտը վրդովելու մահերգազ շեշտերով երբ երկու ծանօթ կառքեր մուտք կը գործէին Չանկըրը լուկան . . . իրենց առաւտեան ճամբորդներէն պարպուած: Այաշի երեք ծրուան ճամբան ինչպէս եօթը քառուան էր վերածուած: Ո՛ր էին Հայ Հանձարի, ազգաբարձութեան եւ հաւատքի մարմնացումները որոնց ճակատին մեր դրոշմած համարները զեռ կորուսած ըլլալու չէին իրենց ջերմութիւնը: Սարսուռը որ կ'անցնէր իւրաքանչիւրիս մարմինէն շուտահան էր կաթուածահար ընելու ամէնքս:

Կառույցաններէն մէկը կը յանդգնէր ահաւոր դադանիքը յայտնել նկարագրելով թէ ինչպէս Թիւնէյ Հասած էին անվտանգ ու տեղոյն պահականոցը ճաշելու սուր կրկին ճամբորդ էր: Հինգ վայրկեան ետք թէքէ Պուրնուի բարձունքին վրայ դիմաւորուած էին դաշտներով միայն գիտուած տասը հողինոց հրոսակախուժէ: Կառույցանները միեւրոյն արակէր ու սպանանցով փոստեզէ աղաւթի էին փորձեր յամրութեան ամէն յոյսով: Ծարպըրտուող մեքենայներու ազահովութեան սպասանամանու տակաւոր բնակիչները կեցուցներ էր կանգնուելու պատշաճ: Երբ մինչ պահակու ուղեր էր դէնքի շինելով կացութիւնը փոխելու առջին սրկիան արգիւր էր զայն խոտի: Տեսոյ վար էր իջեր կառքէն ու սահանջէր՝ որ դրամին յանձնին: Եօթանասուն Հնչիւն ոսկի դրպանելէ կտր զիտք լուրջա փերման վար» (Ջարդուէննուդ հրովարտուող երամ է) ըսելով հրամայեց էր դահիճներուն որ մտակայ ձորակը իջեցնեն Հինգ ընկերները ու մահացնեն դանտը . . . :

Նոյն գիշերն իսկ՝ այս ամէնը պատմող կառույցանը սաստկապէս կը ծեծուէր ոստիկաններու կողմէ իր անդադունապահութեանը համար: Բայց եղեմին մարտամանութիւնները շուտով կը տարաձայնուէին, մասնակցով զմեզ հոգեկան անկարողութիւն կակիծի: Թիւնէյի պահականոցը նոյն միջոցին գործող Յակար անուն ծեղարարի մը դադանի վկայութեամբ ոճիրէն օր մը առաջ կառույցանը համայն Թիւնէյ ժամանկ էր Չանկըրը: Երբ ոստիկաններու վատահամբաւ հրամանատարին թիւնէյի շահան ներկայացուցին եւ տրտմանակ ոստիկանապետին կողմէ ու մտակայ գիւղ մը երթելով հաւաքէր էր տասը հրոսակ: Ասոնց դրժանութիւն էր Արօ անուն աւաղակապետը: Ասոնք նստեց էին մարտադրութեան վրայ ու ծրարներ ամբողջ սպանող: Յետոյ դաշքէր էին ընտրել թուն վայրը ուր ոճիրը պիտի գործադրուէր:

Սպանութեան օրը իմայիլ Հանդիսատես էր եղեր նախիրին՝ Սեւակի նախապէս ըրած սպանալիքը գործադրած ըլլալու գահուսակութեամբ: Նոյն կէտքէն կտր ոստիկան-դիւտարներու շէնքով գրքան» (սակոր կտորող) մահանուանեալ հրամանատարը շինքապարտուալ պալատը միջ զգործադրուեցա՞ւ) Հեռաձայնէր

էր Թիւնէյի պահականոցը: Ասկէ դատ աղաչոյցը կար թէ չորս կառքերու Թիւնէյէ անցնելիքը տեղեկացուած էր հրոսակներուն քանզի ստաղին երկուքին Հայեր մաքրելէ ետք սպասեր էին ուրիշ երկու կառքի եւ որոնք նոյն օրը ճամբորդելու մտադրող բայց զրեթէ հրաշքով եւ մնացող մեր ութը ընկերները պիտի բերէին: Ասոնց չի դալովը հրոսակները սխալմամբ յարձակուեցին նոյն ճամբէն անցնող երկու բոլորովին ուրիշ կառքերու վրայ, ուր վեց Յոյն եւ երկու Հայ նորադիր դիւտարները կային եւ խողխողեղ-դանանք:

Սարսուիլը զոր ապրեցանք շարաշար Հիւճեց մեր մարմինը: Ի՞նչպէս կարելի էր մարտել Վարուժանի եւ Սեւակի պէս տաղանդներու այնքան անարժան եւ ստոր Թուրքերու կողմէ: Վատարար բնաջնջուելուն գաղափարը: Բոլոր նահատակուողները սիրաբներ էին Հայ արժանիքի: Սուղը կ'ընկնէր մեզ ծայր աստիճան, եւ արդար ընդվզումը վրէժ էր գոտար մեր ներսիդին: Մինչեւ ե՞րբ քաղաքակերթ (՞) աշխարհը պիտի հանդուրժէր Թուրք բարբարոսութեան անզուսպ սրտփրփումին: Գործուած նախճիրները բաւական էին զարերն իսկ ցընցելու:

Ոճիրին գիշերը երկրաշարժի ցնցում մը դադարուեցաւ եւ յաջորդ օրը դրոյցը լեցնելիք թէ չլրջա էր իջեր նահատակուողներուն վրայ: Աստուածային ցատուժի եւ օրհնութեան այս կրկնակի շնչանները պահ մը խուճապի մատնեցին Չանկըրը ժողովուրդը: Արդիւնքը այն եղաւ որ խտուրթիւնները քիչ մը մեղմացուին: Բայց շատ լանցած Գաղատիոյ Հայակեր կուսակալի փոխանորդ Աթըրը Դասթէմունի կը փոխադրուէր պաշտօնի բարձրացումով իբր լիազօր կուսակալ: Ի՛նչէնեան կը ջշուէր դէպի Սեբաստիա: Կնիւթիւնք երկու սուրի մէջտեղ տուայտիլ: Ծամբորդելը վտանգաւոր, հոն մնալը աղէտալի:

Վարուժանի եւ Սեւակի նահատակութենէն երկուք ու կէս ամիս ետք ստիպուեցայ ճամբորդել դէպի Դաստիա: Անցայ Թիւնէյէն ու Թէքէ Պուրնույէն: Իջայ ձորակը որու մէկ կողմը սէղեր կ'անէին եւ միւս կողմը փոքրիկ աւաղան մըն էր գոյացած: Տեսայ քիչ անդին կիսաթաղ ոսկորները մեր Հերոսներուն: Դիւաբաց կանգնեցայ անոնց առջեւ եւ արտասանեցի շեղուցած աղօթք: Յօշոտուած մարմիններ էին ասոնք: Կը թուէր թէ վայրագ դաղանները յաջողի էին մահացնել Սեւակըն ու Վարուժանը: Բայց այսօր անոնք եւ ընկերները կ'ապրին տակաւին իրենց արտադրութիւններով ու թողուած անջինջ տպաւորութիւններով: Հայու ոգին յարտակապէս պիտի ներշնչուի իրենց դաղափարականներով ու դիւցադնական օրինակով: Հայաստանեայց Նկեղեցին այս նոր մարտիրոսներու խանդովը հրդեհուած պիտի անշուտ լուշանայ իր վերածնունդը ունենալ:

Ե՛րբ արդեօք կարելի պիտի ըլլայ այդ նահատակներուն նուիրական Նչխարները փոխադրել Հայաստան ու անոնց վրայ կանգնել տաճար մը ուրիշ մտապետութեան ճառագայթն այն լուսաւոր սկզբունքները որոնց համար իրենք զոհուեցան:

Comal 29/3

ՅՈՎ. ՀԱՆՆ Ս. ՎՐԻ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԻԲ 1/21/92 №3



MIKAEL CHAMDANDJIAN

Միքայիլ Շամժանճեան

# ՅՈՒՇԱՐՁԱՆ

ԱՊՐԻԼ ՏԱՍՆԸՄԷԿԻ

18 MAI 1915



Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ո Ւ Ա Մ

«ԱՊՐԻԼ ՏԱՍՆԸՄԷԿԻ ՄԳՈՀԱՆԴԷՍԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ» ԻՆ ԿՈՂՄԷ

ՆՈՒՊԱՂԵՍԱՆ ՄԱՏՆԱԴԱՐԱՆ  
Հ. Բ. Հ. ԱՐԽՐԵՅԱՆ — ՔՊՊԳ



Կ Պ Ո Ղ Ի Ս

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

1919



## ՉԱՆՂՐՐԸ ԵՆ ՎԵՐՅԻՇՈՒՄՆԵՐ

ԱՅՍՈՐ, երբ հրաւէրը կ'ըլլայ ինձի, որ պատկերը տամ Չանղըրը իմ ընկերներուս կեանքին, անոնց նահատակութեան անթաղ Պանթէոնն է որ աչքիս առջեւ կուգայ, եւ դառնօրէն կը զգամ, թէ մ'ըր հողիներուն շիրմացումին կը սպասէ ան՝ իր վերեւ, վաղուան փառքի ճամբուն մէջ: Հաւաքական փառքին տանող ամէն ճամբայ, իր նահատակները ունեցած է, եւ այսօր ամէնքս ալ կ'ընդունինք թէ զոհուածներուն հողիները, մեզ վրկութեան ճամբուն վրայ տանող կամուրջը եղան պորփիւրէ:

Սիրելի բացականերու վրայ խօսիլը, դարպաս մըն է անոնց յիշատակին: Իսկ ինձի համար, Չանղըրը վրայ խօսիլը, որ ալ յաւիտենական բացական է, ապրիլ է այն սարսափը որ ամէնունս եղաւ. անոնք՝ սարսափէն յետոյ, գացին կորուստի ճամբան, ու ինձի, թերեւս նախասահմանութեամբ մը, տրուեցաւ վերապրիլ, եւ խղճմտանքիս մէջ սգալ անոնց կորուստը:

Հիմա, բովանդակ աղէտէն յետոյ, ամէն անգամ որ մտքի եւ սրտի կորուստներուս հաշուեկշիռը կ'ուզեմ հանել, մեծ նաւաբեկութենէն սակաւաթիւ ազատուածներէն մէկուն հողեքանութեամբ կը խորհիմ թէ վերապրիլը միշտ երջանկութիւն մը չէ ենթակային համար, քանի որ կը կարծուի թէ կորստողը կրնար, տարբեր կարգադրութեամբ մը կամ դարձուածքով մը, ազատիլ վերահաս փոանդէն: Մարդս, թերեւս նախասահմանուածին որսը, շատ անգամ կ'ուզէ անգիտանալ այդ բանը եւ առկից էր որ յառաջ կուգայ հակամարտութիւնը իր ջանքերուն եւ լոկի ունեցող դէպքերուն միջեւ:

Խղճմտանքիս վրայ, մտածումներու այսօրինակ բեռով մըն է որ հիմա միտքս կը բերեմ Չանղըրը մեր կեանքը:

Շատերով գացինք այնտեղ, ճամբան՝ Այաշին մեր ծանրածանր հարկը տալէ յետոյ: Բախտին հաւասար գաւակներն էինք դարձած ամէնքս ալ, թէեւ ամէն ոք, իր օրինաւոր ջանքերով կ'ուզէր առանձին շնորհներու ընկերանալ բախտէն: Մէկէ աւելի անգամներով, մեր ընկերներէն երեսունի չափ, (մեր ընդհանուր թիւը հարիւր յիսունի մօտ եղած էր Չանղըրը մէջ) արտօնուեցան Պոլիս վերադառնալ:

Աստուծոյ յետոյ, Հայկական հնդդի ընդհանուր կացութիւնը այնքան վատթարացած էր արդէն, որ մեր սնուցած վախերէն զերծ մնալիս լիապէս բաւական կը համարէինք, ինքզինքնիս բախտէն նպաստաւորուած նկատելու համար, եւ որքան ալ յանդուզն բացատրութիւն մը պիտի ըլլար ըսելը «չէինք յուսար», բայց ես մեր հոգեբանութիւնը ներկայացուցած պիտի ըլլամ երբ յայտնեմ թէ ատեն մը եկաւ ուր ալ չէինք յուսար Պոլիս վերադառնալ :

Ուրեմն ի՞նչ եղան մօտ պյն հարիւր քսան հոգիները, որոնք մեր խումբէն Պոլիս չվերադարձան : Աստուծոյ հազիւ տասնեւ հինգ հոգիի չափ վերապրած են այսօր : Ուրեմն քախտը ուզեց որ մնացած շուրջ հարիւրը եղեռնին յանձնուին :

Բախտը քմահաճ նկատուած է ընդհանրապէս : Մարդիկ այնպէս կարծած են թէ քն իրենց նկատմամբ միշտ դիմագծութիւն կը փոխէ : Ես մօտէն վերահասու եղայ անոր հաստատակամութեան, անոր հետեւողականութեան :

Մենէ, երկու անգամով, երկու կարաւաններ բաժնեցին : Երկու ջինք յիսուն երկու հոգի եւ երկրորդը քսանեւտրս : Երկու կարաւաններն ալ Տէր-Ջորի համար ճամբայ հանուեցան : Այն ատեն, դու ընտանի չէինք այս անունին : Առաջին կարաւանէն, եղած դիմումներու հետեւանքով վար դրուելով, բողոքական գրածախ Պարոնեան միայն Պոլիս վերադարձած է : Միւս բոլոր ընկերները, մէջն ըլլալով նաեւ խոստմնալից, համակրելին Արմէն Տորեան, գացած են Ալսիստանի ճամբաներուն դժխեմ զոհերը ըլլալ : Երկրորդ կարաւանէն վերապրած է միայն Արամ Անտոնեան, որուն Չանդրըզն էնկիւրի գացած պահուն, արկածով ոտքը կտրելով, վերջին քաղաքին մէջ հիւանդանոց մը նետուած է, որովհետեւ անկարելի էր զինքը քայլեցնել, եւ միւս ընկերները, հետիոտն տարած են քաղաքէն երեք ժամ հեռու, Էլմա Տալիստոքտը, եւ առանց բացառութեան ամէնքն ալ խողխողած են :

Ամէն անգամ, երբ կը խորհիմ թէ ի՞նչպէս կազմուած են այս երկու կարաւաններու ցանկերը, բնազդական մղումով մը բախտին կը վերագրեմ այդ բանը :

Առաջին կարաւանին մաս կազմողները գլխաւորաբար, մեր մկանաւոր բախտակիցներն էին, բայց աստուծոյ գառ, իրենց հետ առնուեցան նաեւ ուրիշներ : Կեդրոնէն շատ քիչերու մասին ցուցմունքներէ զատ, մնացեալներուն ցանկը Չանդրըզնի մէջ կը պատրաստուէր : Յանցնայարտութեան կամ անմեղութեան մասին ամենքս ալ իրարու հաւասար էինք : Ուրեմն ի՞նչ բան կար որ կ'առաջնորդէր Չանդրըզնի վատշուէրները, իրենց ցանկերը պատրաստելու ատեննին : Արմէն Տորեան մաս կազմեց առաջին կարաւանին, որովհետեւ, իբր Ֆրանսական զուարթախոհութիւնը իւրացուցած մէկը, շէնշող էր եւ երգի մը մոլտուքին թրթուումները միշտ շրթունքին վրայ : Ես հրաւիրուեցայ մաս կազմել նոյն այս առաջին կարաւանին, որովհետեւ մեր մկանաւոր ընկերներէն մէկուն հետ, առաջանի անուան նոյնութիւն

ՊՐԻՆՏԵԿՆԵՆԻՆԵ

մը ունէի : Այսօր , այդ կարաւանէն ետ մնալս , բախտով միայն կրնամ բացատրել :

Երկրորդ կարաւանը կազմուեցաւ անոնցմէ որոնք , կամ որ եւ է պարկեշտ աշխատանք կը կանտարէին քաղաքին մէջ ; Իրենց կեանքը շահելու համար , եւ կամ թէ , չգիտցուիր ինչպէս , ուշադրութիւնը զրաւած էին ցանկը սլաութաստողներուն : Այս կարաւաններու կազմութեան զլսաւոր շարժիչ ոյժը եղած է նոյն տեղի իթթիհատի սլատասխանատու քարտուղարը Սլուզ , որուն վրայ կը ծանրանայ զլսաւորաբար , մեր հարիւրէ աւելի կորսուած ընկերներուն արեան պարտքը :

Այն երեք զոհերը , որոնց հետ անձնական շատ մը յիշատակներով կապուած եմ , եւ որոնց եղբրական վախճանը միշտ սրտիս մէջ կ'արիւնի , եղած են Դանիէլ Վարուժան , Տիրան Քէլէկեան եւ Ռ. Սեւակ :

1915ի Յունիսի վերջերը , առաջին կարաւանին մեկնելէն եւ տասն եւ ինը հոգիներու ալ Պոլիս վերադարձը արտօնուելէ յետոյ , մէկուկէս անմիջի չափ , միասին ասլընցայ Սեւակին հետ : Ես ուրիշ վից հոգիներու հետ միասին կ'ապրէի : Բոլոր ընկերներս ալ , առանց բացառութեան , մաս կը կազմէին Պոլիս վերադառնալու արտօնուածներուն , Սեւակ ալ , այդ օրերուն ինչպէս էր Չանդըրը , ուրեմն անմիջապէս որոշեցինք մեր կենակցութիւնը :

Պոլսէն ծանօթ էր ինձի իր դիւրահաղորդ եւ զուարթ հոգին : Տօնական զուարթախոհութեամբը լեցուցած էր տուններնիս : Այդ ատեններուն , (յուլիսի սկիզբները) տակաւին չէէնք զիտեր առաջին կարաւանին վիճակուած բախտը , եւ անտեղեակ էինք տակաւին Թուրքին ելեռնի կամքին :

Իսլամին ծոմալահութիւնը սկսած էր արդէն , եւ ծայր տուած է լեռնի ապերասանութիւնը : Չարդերու չարաշուք գրոյցներ սկսած էին մեր ականջը հասնիլ : Այդ միջոցներուն էր , օր մը մեծ իրարանցումի մէջ տեսայ զինքը : Այն տեսակ խօսք մը տարածուած էր քստորականներու մէջ , թէ մահմետականութիւն ընդունողը ազատ պիտի արծակուէր : Այդ ատենները , առաջին կարաւանը մեկնած էր արդէն եւ եօթանասուն հոգիի չափ մնացած էինք : Ամբողջ երկու օր , խեղճը աշխատեցաւ , համոզելու համար տկար հոգիները , որ մահը մահմետականացումէն աւելի աղէկ է , եւ զատ զատ երդում ընել տուաւ ամէն անոնց , որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր , թէ հաւատարիմ պիտի մնան իրենց լոյս-հաւատքին :

Երբ մեր կարաւանը Չանդըրը հասաւ , մեր մէջը ութը բժիշկներ կային , իսկ Չանդըրը մէջ բժիշկ չկար բնաւ : Մեր բժիշկ ընկերները իրենց արուեստը , տեղւոյն բնակիչներուն բարւոյն ի գործ դրին : Պոլիս մեկնումներէ յետոյ , երեք բժիշկներ մնացած էին : Այդ երեքէն ամէնէն աւելի փնտուածն էր Սեւակ : Քաղաքին մէջ կանոնաւորապէս բժշկութեամբ կը զբաղէր : Տօթթ. Տինանեան , Պոլիս վերադառնալուն ա-

18 MAI 1961

Հ. Բ. Կ. Ս. Ա. Կ. Կ. — Ս. Կ. Կ.



ուիթով, Սեւակին յանձնած էր վիրադարմանութիւնը (pansement) թուրք աղջկան մը, որուն վրայ ինքը վիրաբուժական գործողութիւն մը կատարած էր: Այդ աղջկան հայրն էր Ձէթէճի Արապաճը Իսմայիլ-այս մարդը ակուայ ունէր Տօթթ. Տինաննանին, որուն չէր կրցած իր ուզած զինաւոր կատարել տալ վիրաբուժական գործողութիւնը: Եւ Տօթթ. Տինաննան, Պոլիս վերադարձի արտօնութիւնը գալուն, ամէն նախագգուշութիւն ի գործ դրած էր, վերոյիշեալին իր մեկնումի օրն ու ժամը չգիտցնելու համար:

Տօթթ. Տինաննանի մեկնումէն յետոյ, Սեւակ կանոնաւոր կերպով կը շարունակէր իր բժշկական այցելութիւնները այդ աղջկան:

Օր մը, կէս օրէն բաւական վերջը, տակաւին ճաշի չէր եկած: Ժիշտ կէս օրին ճաշի համար տունը կը գտնուէինք իրարու յայտասելու համար: Տրուած ըլլալով իր ճշդապահութիւնը, արտասուիտ բան մըն էր ելածը: Ես, գրեթէ մտահոգ իրեն կը սպասէի, ճաշասեղանին գլուխը: Վերջապէս եկաւ: Բոլորովին անսուտ կերպով իրեն համար, անխօս էջ. տքնութենէ դեռ նոր դուրս եկողի մը յոգնածութիւնը ունէր դէմքին-արտայայտութիւնը: Յայտնապէս չարչարուած էր: Սեղանի վրայ բան մը չխօսեցաւ. երրորդ մը կար մեզի սեղանակից: Երրորդին մեկնելէն յետոյ, երբ առանձին մնացինք, խոստովանելու պէտքէն ճնշուած մէկու մը երկչոտութեամբ սկսաւ պատմել ինծի թէ ի՞նչպէս դարմանուող թուրք աղջկան հօրը կողմէ տուն կանչուելով երկու ժամ վար դրուած էր: Ապիրատը նկարագրած էր թէ ի՞նչպէս հայկական ցարդերը մուտքով մը կատարուելու վրայ էին: Թէ ամէն օր նմանօրինակ հրամաններու կը սպասուէր Չանդըրբի Հայերուն համար, հետեւաբար իր խանդաղատանքի զգացումները պարզելով Տօթթէօրին, կը համոզէր զինքը ընդունիլ մահմետականութիւնը, քանի ուշ չէր: Պատոցուցած էր զինքը իր տանը բոլոր մութ անկիւնները եւ խորհրդաւոր նկուղները, ջասուկ մօրը՝ Տօթթէօրին ճակատը: համբուրել տուած էր, եւ յետոյ գրեթէ արտօնած զինքը որ մեկնի, հրաւիրելով որ մինչեւ 24 ժամ զիւ-ւորագրութեան ճիւղի նախագահին դիմէ, իր կրօնաւիտիս եղած ըլլալը յայտնելու համար: Հետեւեալ օրը Պայրամ էր: Սեւակ, ճակտի պարկնշտ քրտինքով մը պատմեց ինծի թէ ի՞նչպէս ոգորած էր, համոզելու համար այդ անողորթ թէ այդպիսի պահանջում մը չներկայացուի իր ընն, թէ ինքը ո՞րքան կը սիրէր կեանքը՝ իր գաւակներուն համար, ուստի չէր ուզեր մեռնիլ: Մեկնած ատենը, հեթանոսը նորէն շեշտած էր թէ սպասուած հրամանը կրնար նոյն իսկ քահնելոյրս ժամէն առաջ հասնիլ, հետեւաբար պէտք էր աճանարել, պաշտօնական դիմումը ընելու համար զինուորագրութեան ճիւղի պետին: Սպառնալիքին դէմ կարելի չէր անտարբեր մնալ, որովհետեւ տեղիակ էինք եղևունին համատարած թաւայումին, որուն երեք չորս օր առաջ, Էնկիւրի իր երկու հագարէ աւելի լաւագոյն այրերը զոհ տուած էր: Մենք որոշումը տալու համար յմտածեցինք իսկ, որովհետեւ մէկ հատիկ էր ան: Սեւակ, երբեք իրմէ սպասուած դիմումը չըրաւ զինուորագրութեան ճիւղի

պետին: Մեր ընկերները խուճապի չմատնելու համար, գաղտնի պահեցինք միջադէպը, մնզի զաղտնակից առնելով միայն Տիրան Բէլէկեանը:

Բայց մեր հոգիները, սկսած էին արդէն, տաժանութեան մթնոլորտին մէջ թեւածող մահուան սարսափը ծծել: Մեր տունը քաղաքին եզրն էր, գրեթէ դուրսը: Որոշնցինք քաղաքին մէջ փոխադրուիլ, եւ գացինք տեղաւորուիլ, մեր դժբախտ մեկնող ընկերներէն թախուր մնացած տուն մը:

Այս վերջիններէն մէկուն ժառանգը մնացած էր Սեւակին՝ տեսակ մը տարաշխարհիկ թռչուն, որուն տեսքը չարագուշակ կը թուէր ինծի: Երբեք չեմ տեսած թռչուն մը, որ այնքան եղբրականութիւն արտաշնչէ իր փետուրներէն, որքան այդ անհամեմատօրէն փոքր զլսով թռչունը: Մանաւանդ, զգացած էինք արդէն իր առաջին տիրոջ՝ եղեռնին նշաւակ րոյտը. սու առաջին կարաւանին հետ մեկնած էր:

Չանդըրըի Իթթիհատի պատասխանատու քարտուղարին ջանքերով, տեղւոյն միւթէսարըիը Ասաթի պէյ, (Տէօրթ-Յօլի Ասաթը, որ Ատանայի ջարդէն յետոյ իբր նոխազ քաւութեան հինգ տարի անալաշտօն մնացած էր, եւ անկից յետոյ իր առաջին պաշտօնն էր Չանդըրըի միւթէսարըիութիւնը) ուրիշ տեղ փոխադրուեցաւ, որովհետեւ յայտնապէս Հայերու հանդէպ բարեացակամ վարմունք մը ցոյց կուտար: Ասաթէն վերջ, փոխանորդաբար Չանդըրըի միւթէսարըիութեան պաշտօնը կը վարէր, Բասթէմունիի վիլայէթին ռատիկան զինւորներուն ընդհանուր հրամանատարը: Բէշիտ Բաշա կուսակալութեանէ տակաւին չէր հեռացուած:

Սեւակ, միւթէսարըիի փոխանորդին հետ շատ մտերիմ յարաբերութեան մէջ էր: Շատ անգամ, իրիկունները, կառավարչատան մէջ անոր մասնաւոր սենեակը կ'երթար օդի խմելու համար: Չարագուշակ թռչունին նկատմամբ իմ թելադրութիւններուս վրայ, իրիկուն մը զըլխատուց զայն, իր անծին չարաբախտութիւնը զլխատելու գոհունակութեամբ, եւ խորովել տալով միասին տարաւ, եւ կառավարչի փոխանորդին հետ իրենց օդիին ալանդեր ըրին զայն: Ո՞րքան խղճալի են մարդուս՝ իր չարաբախտութեան դէմ մաքառելու միջոցները: Արդէն հո՞տ է բուն անօգնականութիւնը մարդուն:

Երկրորդ կարաւանն ալ տուիւնք մենէ, անօրէնութեան համբաններուն, եւ անոր յուղարկ երթալէ մեր վերադարձին, կառավարչատուն հրաւիրուեցանք զեկոյցի մը տեղեկանալու համար: Երեսուն եւ եօթը հոգի մնացած էինք, մեր մէջ հաշուելով Սեւակը. Վարուժանն ու Բէլէկեանը: Երեսուն եւ եօթը հոգիներու ցանկ մը եկած էր: Ստոնք ազատ սլիտի ձգուէին եւ Պոլսէ զատ ուզած տեղերին երթալու ազատ պիտի ըլլային: Այդ ցանկին անուններէն հինգին տէրերը կամ Պոլիս վերադարձած էին, կամ թէ մենէ մեկնող կարաւաններէն մէկին կամ միւսին մաս կազմած: Ստոր փոխարէն, մեր ընկերներէն հինգին անունները կը պակսէին ցանկին մէջ: Այդ հինգ մեր սիրելիներուն մէջ էին նաեւ մեր սիրելագոյն Վարուժանն ու Սեւակը: Ասոնք՝ Պոլիս,

ՉՈՒՊԱՆԵՐԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆՈՒՄ

Գ. Բ. Ը. ՄԻՈՒՓՅՈՒՆ — ՓԱՆՐԳ

18 MAI 1901

Թէ՛ իրենց ընտանիքներուն եւ Թէ՛ ներքին Գործոց նախարարութեան դիմում ըրին հետագրով, որպէս զի իրենք ալ մեզի պէս նկատուին, առանց չարաքախտութեան կամքին, արդէն ուրիշ պատճառ մը չկար, որ անոնք տարբեր նկատուէին :

Մինչ այն, Իթթիհատի պատասխանատու քարտուղարին ջանքերով, որոշուեցաւ որ այդ հինգը մեր Այաշի ընկերներուն քով փոխադրուին : Որոշում կայացած էր, Չանդըրի մէջ հայ արքայական չթուղուլ : Բաղաքային եւ զինուորական զերիներ սկսած էին հասնիլ քաղաք : Շատ նշանակալից պարագայ մըն է վերջին տեղեկացածս Թէ, մեր հինգ ընկերները Այաշ փոխադրելու որոշումը տրուած թուականին Այաշի մեր ընկերները ա՛լ չկային յաւիտենապէս :

Սեւակ օգտուելով կառավարչի փոխանորդին հետ ունեցած իր մտերմական յարաբերութիւններէն, իրենց մեկնումի օրը, երկու-երեք, անգամ յետաձգել տուաւ, եղած զինուորական վրայ Պոլսէն գալիք պատասխանի մը սպասելով : Ո՛չ մէկ պատասխան :

Վերջապէս Օգոստոս 13/26 1915, հինգշաբթի առաւօտ մը, նախորդ գիշերը Սեւակ հրաժեշտ առած էր կառավարչի փոխանորդէն, հինգ հոգին երկու կառքով ճամբայ ելաւ, մէկ հեծեալ ոստիկան-զինուորով եւ մէկ ոստիկանով : Միւթէսարըի փոխանորդը ամէն բարեկամ կարգադրութիւն ըրած էր, Սեւակը եւ իր ընկերները ողջամբ Այաշ հասցնելու համար : Սեւակի կառապանն ալ, կառավարչի փոխանորդին Բասթէմունիի ամենօրեայ կառապանն էր, որ զիպուածով Չանդըրը եկած էր, եւ որուն իր տիրոջը կողմէ յանձնուեցաւ Սեւակ, անոր ապահովութեանը մասին ամենախիստ հրամաններով :

Մեկնումի գիշերը, մեր տանը մէջ, բաղաատաբար ու-մուայլ անցաւ : Երկուքս ալ այն իրիկունը, օգտուելով մեր խոհարարուհիին կարողութիւններէն, Այաշի մեր ընկերներուն համար քաղցրաւենիք պատրաստելու զբաղեցանք : Մասնաւորաբար Սիւսմանթօ բարեկամիս պատուոյ կտորներ սահմանեցի, շատ մօտէն ծանօթ ըլլալով ինծի, ամենազգի քաղցրութիւններու համար իր հոգիին անպատում տկարութիւնը : Շատ ուշ պառկեցանք գիշերը եւ շատ քիչ քնացանք : Օրուան լոյսը տակաւին հեռու էր մինչ, երբ մենք արդէն ոտքի վրայ էինք : Չարաքախտութեան ցուցմունքն էր որ նորէն վրդոված էր մեզ : Երազին մէջ Սեւակ տեսած էր կինը բոլորովին նիհարցած ու տղեղցած, իսկ անդրանիկ մանչ զաւակը անօրինակ կնրալով մեծցած ու գեղեցկացած : Երազի հաւատացողներ, միայն մէկ տեսակ մեկնութիւն կու տան այս կրագին, այսինքն, ենթակային համար մեծ չարաքախտութիւն մը կը սպասէ :

Կառապանը եկած էր արդէն, շատ ժամանակ չունէինք խորհելու, եւ ճամբայ ելանք, մեկնողներու ժամադրաւայրը, քաղաքին կամուրջը փութալու : Անդուսին, օգոստոսեան պայծառ երկնքի մը տակ, դեռ չճեղքուած մութին յանձնեցինք մեր ընկերները :

Նոյն իրիկունը, ժամը 12-ին, անոնց սպանման լուրը, Թիւնէյէն

հեռածայնով եկեր էր Չանդրըրը : Տեղւոյն ոստիկան զինուորներու հրամանատար Նուրէտտին եւ Իթթիհատի պատասխանատու-քարտուղարը Քղուզ, հեռածայնի տեղը գտնուելով, քրթիջով ընդունել էին գոյժը : Գիշերը կառավարչի փոխանորդը, եղբունէն կատողած, մանաւանդ իր սիրական բարեկամին սպանութենէն այլայլած, ներկայութեանը կը կանչէ Նուրէտտինը : եւ իր ծանր կասկածները կը յայտնէ : Այդ միջոցին Ռէշիտ Բաշա տակաւին կը շարունակէր կուսակալ մնալ վիլայէթին, եւ ձեւական հետապնդումներ կատարուելով, իբր սպանիչ, տասնեւմէկ խեղճուկ զիւղացիներ բերուեցան Չանդրըրի բանտը : Հետեւեալ օրը, ուրբաթ, կառավարչի փոխանորդին մօտ մեր զխումբին, տեղեկացանք այս մանրամասնութիւններուն, ու տեղեկացանք նաեւ, մահէն գառնագոյն իրողութեան, այն թէ այդ առտուն իսկ, հինգ զոհերուն մեկնելէն 24 ժամ վերջ, Պոլսէն հեռագիր մը եկած էր, արտօնող որ այդ հինգն ալ միւս ԵԶին պէս նկատուին : Տրուած չէ երբեք մարդուն, չարաբախտութեան անողոք անիւը կասեցնել : Յետոյ ստուգապէս տեղեկացայ, որ չէթէ Արասպաճի Իսմայիլ, մեր հինգ ընկերներուն ժամանակէն երկու ժամ առաջ, երեւցած է Թիւրէյ, զիւղացիները գլուխը հաւաքած, բանի մը համոզելու աշխատելով, ու յետոյ իր ճամբան շարունակած է դէպի Էնկիւրի :

Վարուժան Չանդրըրի մեր ընկերներուն ամէնէն լուսկեացիներէն ու քաշուածներէն եղաւ : Ինքը գլխաւորաբար զբաղած էր մշակական բանաստեղծութիւններ գրելով : Անգամ մը, մեր ամէնէն աւելի խոռվայոյզ օրերուն, նոր գրած մշակական մէկ քանի հնչեակները ինծի կերպով վերջ, չկրցայ զարմացումս ու հիացումս միանգամայն յայտնելու իրեն, որ այդքան արհաւիրքներու մէջ կրցած էր այնքան ջիւղ ու այնքան անապական սլահիլ իր հոգին եւ ծնունդ տալ, այնքան խորունկ հանդարտութեամբ բնութեանս պաշտ բանաստեղծութիւններու : Ան պատասխանեց թէ իր այդ հանդարտամտութիւնը կը քաղէ այն հաւատքէն, զոր ունի Հայուն անպագային վրայ : Ինչո՞ւ չտրուեցաւ իրեն ապրիլ իր հաւատքին պսակումը :

Այս հինգ զոհերուն նախահիրէն յետոյ, անշուշտ մննէ ո՞չ մէկը ու՝ զեց օգտուել իրեն տրուած անպատուութենէն, ուրիշ տեղ մը ճամբորդելու համար : Երեսուներկու հոգի մնացած էինք : Մեր մէջ ունէինք առկաւեին Տիրան Քէլէկեանը : Արտասահմանէն վերադարձէն ի վեր, Պոլսոյ մէջ լաւ բարեկամներ էինք իրարու : Մեր ծանօթութեան տասնեւեօթը տարիներու ընթացքին, թէեւ այլապէս հայ գրականութեան համար տող մը չէ բերած, բայց իմ գրական բոլոր ձեռնարկներուս, սկսելով Կիսամսեայ «Մասիս»էն, լայնօրէն աշխատակցած է, հայ գրականութեան լաւագոյն էջեր արտադրելով :

Տիրան Քէլէկեան շատ հկուն միտքով պատեհապաշտ մը եղած է : Չանցած եմ զինքը կորովի եւ ձեռներէց : Բան մը միայն զինքը վախճուեցած է, կեանքի նիւթական դժուարութիւնները կողած են անոնք,



եւ իր տկարացումներն ալ ատոնց հանդէպ է միայն որ երեւան եկած են: Մեր՝ Չանդըրը հասնելէն երկու շաբաթ վերջ, առաջին Պոլիս վերադարձողներուն առիթով թէեւ հաղորդուեցաւ իրեն թէ Պոլսէն զատ, ազատ է ուզած տեղը երթալ, բայց Քէլէկեան նախընտրեց մեզի հետ մնալ: Թէեւ իր սեւեռեալ մտածումն էր, ծովնգերեայ տեղ մը երթալով իր փախուստը հնարաւորել, բայց մտածումը երբեք գործի չլուծուեցաւ:

Չանդըրը մէջ, մէկ բանի վրայ տարակարծիք էի իրեն հետ: Քէլէկեան, իբր ամէնէն աւելի թափանցողը իթթիհատական մտայնութեան եւ քաղաքականութեան, շատ ճիշդ կերպով կը բնորոշէր երբ կ'ըսէր թէ իթթիհատականները գիտական ճշգրտութեամբ մը վարելու վրայ էին հայկական հալածանքները, եւ յետոյ կ'ընդունէր թէ իրենց երկրին ամէն մէկ թիզը թշնամիին պիտի յանձնէին, բուն ոգորումներէ յետոյ: Այս վերջին կէտին մէջ տարակարծիք էի իրեն. Քէլէկեան մեծ պատիւ մը կ'ընէր իթթիհատական բախտախնդիրներուն: Իրենց երկիրը թիզ առ թիզ թշնամիին յառաջխաղացութեան, սոցեւ պաշտպանելու համար ահագին զոհողութիւններ հարկ էր ընել: Անոնք, ո՞ր պիտակին տակ ալ որ ըլլան, անկարող են այդ բանին: Իսկ հայկական հալածանքը անշուշտ մինչեւ վերջը պիտի տարուէր, որովհետեւ իրենց ամէն քաղաքական բաժանումներու մտայնութիւնը այդ է, քրիստոնեաներու դէմ ընդհանրապէս, եւ վերջին կէս դարուն՝ Հայերուն դէմ մասնաւորաբար, երբ ինքզինքնին անպատասխանատու շրջանի մը մէջ կը զգան, ազատ ասպարէզ տալու համար, իրենց նախամարդկային առհաւական բնագրներու շղթայագերծումին:

Քէլէկեան Պոլսէն, ձեռքի տակէ, կնոջմէն լուր ունէր թէ գերման դեսպան Վանկէնհայմ թուրք կառավարութենէն երաշխաւորութիւն առած էր իր կեանքի մասին: Ուրեմն, մեր շուրջը եւ հետուն, հակառակ տեղի ունեցող անլուր նախճիրներուն, Քէլէկեան լաւատես էր իր կեանքին համար: Մեծ հաւատք ունէր Վանկէնհայմի վրայ, եւ գիտէր թէ ան կարող է յարգել տալ, իրեն եղած խոստումը:

Հոկտեմբերի աշնանային առաւօտ մը, հեռագրական գործակալութիւնը կը հաղորդէր, պնդերակութեան հետեւանքով, գերման դեսպան Վանկէնհայմի մահը: Ժամանակ չէինք ունեցած տակաւին չափելու այդ լուրին քաղաքական կարեւորութիւնը, կամ մեզի համար ունենալիք հետեւանքները: Յաջորդ առտուն Քէլէկեան ձերբակալուեցաւ արդէն, եւ Չորումի պատերազմական ատեանը ղրկուելու պատրուակին տակ ճամբայ հանուեցաւ: Ընկճուած էր ինքը, վախճանը նախատեսած, եւ արքորակից եկեղեցականի մը յանձնարարած որ կիրակի օրը իր հոգւոյն պատարագ ընէ: Կարծեմ չորեքշաբթի օր մը մեկնեցաւ:

Իսկ ես, երբ այսօր, իր յիշատակին այս տողերը կ'արձանագրեմ, միտքս կ'ընայ իր մէկ խոստովանութիւնը բախտի գոյութեանը մասին իր հաւատքին:

Ղրկուելէն մէկ ամիսի չափ առաջ էր, ղրկած էինք արդէն Վա-

րուժանն ու Սեւակը : Բարտիններու ծառուղիի մը վրայ կը պտտէինք միասին : Մեր խօսակցութեան նիւթն էր բախտը , չար կամ բարի : Բէլէկեան ըսաւ :

— Բախտը իմ կեանքս , եօթը տարիներով հանգրուաններու բաժնած է : Եօթը տարին անգամ մը , կեանքի մեծ ճգնաժամ մը կ'անցընեմ ես , յետոյ դժուարութիւնները կը յաղթահարուին ի նպաստինձի : Այս անգամ նորէն եօթը տարուան շրջանս լրացած է . . .

Մնացածը լըսաւ . Թէեւ գիտէի թէ այս անգամ ալ լաւտես էր , դժուարութեանց ելքի մասին : Մարդիկ կան , որոնց դէմ չարաբախտութիւնը կը գործէ ճակատ ճակտի , իսկ մարդիկ ալ կան որոնց ետեւէն կը դաւանանէ գաղտագողի :

Բէլէկեանի հեռացումէն երեք շաբաթի չափ վերջը , ես մեկնեցայ Չանդրըրէն ուրիշ եօթը ընկերներու հետ : Վերջը մեզի հետեւեցաւ մէկ հոգի եւս : Իսկ մեր ընկերներէն մնացած քսան հոգիները , Քասթէմունիի Հայութեան տեղահանութեան միասին տարագրուեցան եւ իրենցմէ երեք հոգի միայն ողջ մնացած է , տասնեւեօթը հոգին զոհ երթալով դժուարագոյն պարազաներու եւ սոսկալի համաճարակներու :

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵՍՆ



Dr VAHAN ALTOUNYAN

# Հայ Բոլժակ

Մարտ-Ապրիլ 1920

Կ. Պոլիս

Հայ հոգևոր, հարկ, հասարակական և այլ հարցերի վերաբերյալ  
Բնիկ Բ. Վ. Գրիգորյան, հոգևոր, № 3-4 (մասնա-աշխատանքային) (ԲՅ 2-Ձ)

### ՅԻՇԱՏԱԿՆԵՐ Ռ. ՍԵՒԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԷՆ

«Փոքրայի օր»- այսպես սիրամ էինք կոչել շաբթուան այն երկու օրերը, ուր մենք Չանկըրըի աքսորականներու, տարբեր արամադրու թիւններով արթնցած, արշալոյսին խակ նամակատուն կը վազէինք, Պոլսէն եկած նամակները վայրկեան մը առաջ լափելու համար: Կ'արժէր տեսնել այդ վայրկեանը: ամենքս ալ նոյն թղթատարով երկառոյ մը, յուսադիր ըստ մը պարունակող գրութիւն մը ունենալ կը յուսայինք, թառեր որոնք կրնային անգուժ գրաքննիչին աչքէն վրիպած ըլլալ: Խիստ մեծ կ'ըլլար մեր յուսախաբու թիւնը, երբ ցրուիչին ձեռքին մէջ նազիւ ընամակ կը տեսնէինք: Նամակները ստանալէ վերջ գունդադուռը կ'երթայինք Համի Պապային գետեղերեայ և ծառախիտ սրճարանը՝ արտրեաներու վտարի օրումն մեծ մտադրավայրը, եկած նամակներու վերլուծումներէն յուսադրուելու համար:

Փոքրայի օր մըն էր. ըստ պարտութեան գետեղը հաւաքուած էինք: Ոմանք թիրթիր կը կարդային, ուրիշներ նարտով գրադած էին, իսկ մենք վարուժանին շուրջը հաւաքուած թուրք բանաստեղծութեան մասին իր իննադատութիւններուն նկատելիքէնք: Երանկայի մը քսորականներու մէջ ուրախութեան միջ մը փրթաւ Մեւակը, Սեւակը կը պոռային: Էնդ առաջ վաղեցիներ, դէմքեր կը ճառագայթէին, ինքն ալ շատ զուարթ էր: Ետտ տարօրինակ բան էր մեր ուրախութիւնը, որովհետեւ լուրջ պատճառ մը չունէինք իրաւունքով: Ինչպէս ներքին ընտանիք մը մեզ գուարթ ըլլալու կը մղէր, իհրեւս Սեւակէն բարի լուրեր առնելու մեծ յոյսն էր իրապէս այդ պատճառը:

Հարցումներու տեղատարարի ստոր պայտոյն էր: Աւ Սեւակ կըսկի մանրամասնութեն պատմել իր ձերբակալման ու շահմայումն պատճառը: մասնա թեմ միայն ձեռք սեպուղի, Միւստիքիլի մէջ քաշածները, զինուորական հագուստներուն թղթուելու պատրաստ և այլն: Ամենէն տիտուր դէպքերն իսկ անփութօրէն և զուարթութեամբ կը նկարագրէր: ասիկա Չիլինկիրեանին բնատուր յատկութիւնն էր: Իր համոզումը այն էր, որ մինչև պատերազմին վերջաւորութիւնը մեզ համար Պոլիս գտնուող սնկարկի էր թայց կեանքերնիս վտանքի տակ չէր կրնար ըլլալ:

Բանի որ դործին մէջ Գերմանները կային: Սեւակի շէնչող և ընկերական ազնիւ բնաւորութիւնը պատճառ եղած էր, որ մենք ալ չորտոյալքուէինք, որով իր իսկ թեւագրութիւն մը դեռերգերեայ պարտէշներու մէջ փոքր պատյաններ կը կալմակերայէինք հոն ներքեայներու մրցումը կըսկսէր և բնականարար: Երանքու թիւնը ինքը կը խլէր միշտ: Գալով Չանկըրցի թուրքերուն, քիչ ատրի: սկսած էին Սեւակի աստուածացիները, այնքան շատցած էին շրջանները: Իր բնակական ընտրութիւնները ի սպաս դրած, անդու անդադար կաշխատէր, դրամը կալուորութիւն չունէր: «Կէտք է այս մարդիկը երախտապարտ թողունք, որպէսզի չկարենան մեզի շարիք հասցնել» կըսէր: Թիրևս իրաւունք ունէր:

Պոլիս վերադարձողներու կծիկը քակուել սկսած էր, և ասիկա բարեբար նշան մըն էր թէ՛ մեր կեանքերուն պիտի խնայուէին: Երանքին խուճիկն բավական մեր յոյսերը ցնդեցուցած էր, այդ բաժանումը ամենէն յուզիչ և յուսահատեցուցիչը եղաւ: յիսուն երկու ընկերները դէպի Տիարպէքի և Տէր Զօր դրկուցիւ: Երանք մեզէ կը բաժնէին և այս բնականարար լատ. նշան մը չէր, մնացեալներ սկսած էինք անտրեկել: Զանազան մեկնութիւններ կուտայինք Տէր Զօր զրկուցիներուն մասին, որոնք պարզ երթալու թիւններ էին, քանի որ նրանք ուղղակի կեդրոնէն կուգար: Այդ միջոցներուն Սեւակ սկսած էր տխուր և մտածկոտ ըլլալ, իր դպրան նոգին ճնշող գաղտնիք մը կորցած էր իր շէնչող բնաւորութիւնը մերամուտքութեամբ էր զրնքը: դադանապահ էր, որով չէինք կրնար հոգիին թափանցել:

1915 Օգոստոսի կիսուն էր: 25 հոգինոց ցանկ մը եկած էր, շարտերնիս Պոլիս պիտի վերադառնայինք, իսկ մնացեալները Տիարպէքի պիտի երթային: Զապորդ աստուած խորովին մեկնել ստիպուած էինք: Ետտ սկսանք պատրաստուել: Ետք դիւերը Չիլինկիրեան պիտ անանելու եկած էր, կ'ուզէր գաղտնի տեսակցութիւն մը ունենալ, նկատարարութեամբ կընդունիմ առաջադիր: Ետտի դուրս կ'երթէր թայցիլեայ սեղ մը երթալու համար: — Կա՛ւ մտիկ բրէ վաճան, կրտ: քնձ թրթխուն ձայնով մը, Խո մաշուան դատապարտուած եմ, ստով նանդեր:



կեանքս քու ճարպիկութենէդ կախում ունի , աշխատէ որպէսզի մամ առաջ ազատուիմ . . . »  
 կը սարտուամ , և կախազելով , հաղիւ ճիւղ  
 կըսես , Տոգթորս » միայն կրնամ բռնել :  
 Այն կը շարունակէ Սեւակ , կու՞մ ուզէիր է որ  
 դրակամ սնուանս պէս շողիս այ սեղանիմ  
 և կամ մեռնիմ : Սեւակս քեզ , կը կրկնէ ,  
 մեռնիմ , բայց երբէք հոգիս չսեղանեմ : Բան  
 մը չեմ հասկնար , կը մրմնջեմ սուգահար :  
 Այն , Վահանս , կը շարունակէ նա , բառ  
 առ բառ միտքդ պահէ որպէսզի լաւ հասկը  
 ցնես . « Հոս իմ ինչատական Չէրի , Բիւրի  
 Արապածը Պաշը ըսուած սրբաբանին աղջիկը  
 անյոյս վիճակի մէջ հիւանդ էր , իննամեաւ  
 համար զիս կանչեցին , լաւ առիթ մըն էր .  
 այդ կարգի դադան մը ձեռք ձգելու , ուստի  
 ամէն ճիւղ և ջանք ի գարծ դրի սղջիկը  
 ստոյգ մահուքնէ մը փրկելու . . . յաջողու  
 թիւնս կատարեալ եղաւ . սղջիկը բուժուած  
 էր : Ժամանակ մը վերջ այդ մարդակերպ  
 անասունը զիս տուն հրաւիրեց , սնեակին  
 մէջ առնելն էինք , քաւ շնորհակալ ըլլալ ,  
 և խօսքը շարունակելով Աղջկանս կեանքը  
 ինձ շնորհած ըլլալուդ յախտեան երախտա  
 պարտ եմ , ուստի կը փափաքեմ որ , ես ալ  
 փոխարինեմ , ահա առիթը ներկայացած է :  
 Պաշոյ կեդրոնը մահուանդ վճիռը արձակած  
 և գործադրութիւնը հոս հրամայուած է :  
 Բայց դուն անհոգ եղիր , քանի որ դուն աղ  
 ջիկս ազատեցիր , ես քեզ պիտի ազատեմ ,  
 միայն մէկ պայմանաւ , այսինքն պէտք է  
 անմիջապէս իսլամանաս և աղջիկս կնութեան  
 առնես : Արդէն մեզք չէ որ յեզի պէս դեզե  
 ցիկ և ֆիտան մէկը կեԱՎՈՒՄ մնայ :  
 Բայց պէյ , լսի , ես արդէն ամուսնացած եմ ,  
 կինս գերմանուհի է , Թոն Տէր Կոյց փաշա  
 յի թիկնապահներէն գերման սպայի մը քոյրն  
 է , երկու գաւկի ալ հայր եմ , այդ ինչպէս  
 կարելի է : - Է՛ , լաւ պատասխանեց սնայ  
 լայլօրէն , շատ մեղք պիտի ըլլայ երկուս  
 տարութեանդ , որովհետև վտանգ եղիր  
 եթէ նոյնիսկ յաջողիս Պաշիս երթալու հրա  
 ման առնել , քաղաքէն դուրս ելլելուդ ան  
 պայման պիտի սպանուիս , ուրեմն Է՛ որ  
 միջոց կու տամ , լաւ խորհէ՛ : Այ պատասխա  
 նել անգուս էր . « Շատ լաւ » լսի ու մեկնե  
 ցայ : Խորհուրդ տուի որ ամուսնապէս հա  
 մակերպի . Սեւակ բնիճուած էր , բարկացած  
 և սրանեղած ըլլալը որո՞չ էր , ինձմէ այդ  
 սուսակ խորհուրդ մը չէր սպասեր : Քանի մը  
 որ ստաջ Տիրան Գէլէկեանին ալ խորհուրդ  
 հարցուցեր էր , ան ալ կեանքը ազատելու


նպատակաւ իսլամանալու միջոցը միայն ցոյց  
 տուած էր : Սակայն ես ըմբռնելով ճակող  
 դերս ծանրութիւնը՝ ձրաւունք ունիս  
 սոքթորս , լսի , քու զգացումիդ գործը չէ  
 այդ , փակենք այդ խնդիրը և գանք մեր  
 բնեղիքին , ըսէ քեանեմ , ես Բնչ պիտի կա  
 րենամ քեզի օգտակար ըլլալ : Սեւակ հան  
 դարած էր Վճղայութիւնս պէտք չէ , ըսաւ ,  
 Պաշիս երթալուդ առաջին գործդ պիտի ըլլայ  
 Բերս ելլել կամ խոստ վարպետը առնելով  
 մեզի երթալ հոն տիկնոջս պատմել ամէն  
 բան , նա դիտէ թէ ուր պիտի դիմէ , ինձի  
 ապահով կերպով ուրիշ տեղ մը փոխադրելու  
 ճարը գտնելու , հոգ չէ թէ բանտարկուած և  
 չզիմալուած ըլլամ , բաւ է որ սա ճնշիչ մը թ  
 նոյրտէն ազատիմ : Իր խնդիրքը առանց  
 յարպազելու կէտ առ կէտ գործադրելու խոս  
 խումով կը համբուրուինք և կը բամշուինք :

Երկու օրուան ճամբորդութենէ վերջ կը  
 հասնինք Էնկիւրիւ , ուր փոխանակ կայարան  
 տալիսորդուելու , կը բանտարկուինք : Օրեր  
 կանցնին սակաւին Էնկիւրիւ ենք . յոռի  
 նախադրացու միւսը զիս կը պոչարեն , Սեւակի  
 դէմքը աչքիս տուելէն չի հեռանար , կար  
 ծես խոստամնազանց ըսել կ'ուզէ . բանտի  
 կեանքը կը սկսի տակաւ անտանելի դառնալ .  
 ո՞րպա՞րք բանտարկեալները որոնք թուրքեր  
 են , անպատկառօրէն կը պատմեն թէ ինչպէս  
 սպաննած են այն հարկաւոր Հայերը որոնք  
 այս բանտէն ճամբայ հանուած էին , և կ'ա  
 ռաջարկէին մեր դրամները իրենց տալ , որպէս  
 զի տուանց շարչարելու մէկ հարուածով սպան  
 նեն . . . : Վերջապէս Ուոստոս 30ի այն շար  
 չուր օրը , կէս դիշերին , մեր ձեռքերը կապ  
 ուած ճամբայ հանուեցանք դէպի անձանիթ  
 ուղղութեամբ . մեզի կը հետեւէին ոստիկան  
 զինուորներ և մեր սպաննութեան յատուկ  
 վէճքեր կրող արհաւիրացի կառքեր , մտա  
 տարապէս 750 հոգի էինք . 18 ժամուան ճամ  
 բորդութենէ մը վերջ հասանք Գարա-Կէտիկ  
 ըսուած գիւղը , ուր Սեւակի սպանման տխուր  
 դոյժին տեղեկացայ :

Չանկըրէն օդոստոս 26ին Էնկիւրիւ  
 մեզ հետ Գարա-Կէտիկ գտնուող սա  
 փրիչն էր որ մանրամասն կը պատմէր Սեւակի ,  
 Վարուժանի և իր երեք բնկերներուն սպան  
 ման պարագաները :

Չէթէ Բէիտին իր երախտազխտութիւնը  
 յայտնած էր խոզմօրէն սպաննել ապով  
 Սեւակն ու բնկերները :  
 Ահա այսպէս Սեւակ զոհուելով , իր ուխտը  
 կը կատարէր չսեղանելու համար իր հոգին  
 Զարգանք իր անբիծ հոգիին . . .

**ARAM ANDONIAN**



կանանց կուժէն կը մատուցակէ հին ու կարմիր դինին սլազպաջուն ,  
տոհմիկ սեղանին շուրջը բոլորուածներու : Ու Վարուժանին «Գըր-  
դանք»ը կը հասնի իր յաղթական լրումին .—

Տնակըս բոյրո՛վ լեցուեցաւ ,  
Զի ծոթրիկներ ծոթեցան  
Պատմումանին քղանցքէն ,  
Զի արեւով օծուած ոսկի մագերէն  
Բուրեան մեղրեր ծոթեցան .  
Եւ բիրբերէն՝ մարգրիտներու պէս փաղփաւն՝  
Թափքըփեցան ասուպներ ,  
Տնակըս լոյսո՛վ լեցուեցաւ . . .

Աւանդութիւնը սլարտուած էր եւ ականդամուկութիւնը զսպուած :  
Ժողովուրդը հաշտուեցաւ բանաստեղծին ու անոր անմահական սի-  
րոյն հետ , երբ Կանանց Կիրակիի այդ օրը , եկեղեցական զանգերը ,  
Վարուժանին ու Արաքսիին սիրոյ յաղթանակը ակետեցին ի լուր  
աշխարհի . . .

ԼԵՒՈՆ ԼՍՆԻՍ

### Դ. ՎԱՐՈՒԺԱՆ ԶԱՆՂԸՐԸԻ ԱՔՍՈՐԱՎԱՅՐԻՆ ՄԷՁ

Ինչպէս այս էջերուն սկիզբը ըսինք , 1915ի սեւ օրերուն , Արամ Անտոնեան ,  
Զանգըրքի ժամանակաւոր ախարավայրին մէջ միասին եղած էր նահատակ բեր-  
թողին հետ : Նուպարեան Մատենադարանի քղթածրարներուն մէջ ձգած իր յու-  
շագրութիւնով , Ա. Անտոնեան կը նկարագրէ Դ. Վարուժանին անցուցած կեանքը  
Զանգըրքի մէջ եւ կուտայ կարգ մը այլ ծանօթութիւններ , որոնց բոլորը կը հրա-  
տարակենք ստորեւ , նոյնութեամբ :

Վարուժան կը սիրէր աշխատիլ ընկուզենիի մը շուքին մտեր-  
մութեան մէջ եւ կը նախընտրէր միշտ առանձին մնալ այնտեղ : Իր  
ընկերները կը յարդէին այդ բաղձանքը , բացի անշուշտ այն սուրբ-  
ներէն , որոնց ընթացքին նոր լուր մը կ'առնէինք եւ զայն իրարու կը  
հաղորդէինք , ընդհանրապէս առանց մեկնութեան : Եւ լուրերը առ  
հասարակ չար էին : Անշուշտ շատ սուտ ու չափազանցուած պատ-  
մութիւններ ալ , յայտնի չէ թէ ուրկէ բխած , շրջան կ'ընէին ստեն  
ստեն : Ոմանք ամէն բանի կը հաւատային եւ նոյնիսկ կը պայթակ-  
դէին , որ ուրիշներ թերահաւատ կը մնան : Եւ Վարուժան հաւա-  
տացողներէն էր :

Սովորաբար , երբ դաշնակցականներու «վիլլա»ն կ'երթայի ,  
ընկուզենիին տակն էր ան , դրեյով դրազած : Մեր բախտակիցներէն  
ոմանք զգուշացուցին զինքը ալդպէս յայտնաբար դրելէ , որովհե-  
տեւ փողոցէն անցնող ամէն մարդ , ինչպէս մեր վրայ հսկող ոստի-  
կանները , կրնային տեսնել ատիկա եւ հետեւութիւններ հանել ,  
նոյնիսկ դրակել դրածը : Վարուժան ըսաւ անդամ մը , որ անվնաս  
բաներ են դրածները եւ եթէ նոյնիսկ դրաւունն ու թարգմանունն  
— իր բռներով — «հաւու մը վիղը ոլորելու իսկ պէտք չի ծաղիլ  
ատոր համար» :

Արդարեւ, իր առաջին տետրակները լեցուն էին առաւելապէս հողին փառաբանութեան, անոր բարեբաշխ արդասաւորութեան եւ բնութեան հոյաչէն ստեղծումներուն նուիրուած քերթուածներով: — «Մշակականներ» են, կ'ըսէր, երբ կը հետաքրքրուէինք: Երբեմն սակայն, աւելի զգուշութիւն կը դնէր. իր աշխատելու եղանակին մէջ, ինչ որ ոմանց խորհիւ տուաւ, թէ կը զրէ նաեւ ուրիշ նիւթերու վրայ: Բայց ասիկա լոկ ենթադրութիւն մըն էր եւ երբեք առիթ չունեցայ տեսնելու, որ իր դրածներէն որեւէ կտոր կարդար:

Օր մը, մինչդեռ ընկուղենիին վրայ շուլլուելու վրայ էի, պատահամբ տեսայ իր քով երկաթեայ աթոռի մը վրայ դրած տետրակը, դոց, կողքին վրայ «Զ» դրով: Հինգ տետրակ լեցուցեր էր արդէն եւ վեցերորդն էր ձեռքինը: Աւելի տեղեկութիւն չունեցայ, որովհետեւ յաջորդ օրը մեր խումբը ճամբայ հանեցին դէպի Էնկիրի: Շարաթ մը վերջ, ինքն ալ 4 ընկերներով մեզի պիտի հետեւէր:

### Ո՞Վ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պարագաները այնպէս բերին, որ ամենազարհուրելի պայմաններու մէջ գործուած այս ոճիւրը անպատիժ չմնայ: Թուրք սպայ մը՝ Մէհմէտ Իզզէթ պէյ, զինուորական հրամանատար Չանղըրըի, իրեն համար պատուոյ խնդիր մը դարձուց ոչ միայն ոճրագործներուն, այլեւ անոնց ընկերներուն բնաջնջումը եւ այս գործը գլուխ հանեց անողորմաբար, հետապնդելով եւ սպաննելով բոլորն ալ, անոնց պետէն, մինչեւ յետինը մեղսակիցներուն, և ասիկա տաքը տաքին, շատ կարճ ատենուան մը մէջ:

Այս ոճրագործները սակայն պարզ գործիքներ էին: Բուն յանցաւորն էր Իթթիհատի Չանղըրըի պատասխանատու քարտուղար (Ֆեաթիպը մէսուլ) Ճէմալ Ուղուզ պէյ, որ անձամբ կազմակերպած էր Վարուժանի եւ ընկերներուն սպանութեան գործը եւ որուն ձեռքը, Քիւրտ Ալօ ու իր ընկերները գործակատարի մը դերը միայն ունեցած էին: Թէեւ, 1918ի զինադադարէն ետք ձերբակալուելով Պոլսոյ մէջ, դատուեցաւ պատերազմական ատեանի մը առջեւ, բայց ձեւական պատիժի մը ենթարկուեցաւ եւ գէթ ինծի յայտնի չէ թէ ինչ վախճան ունեցաւ: Կատարուած դատավարութիւնը պարզ գայթակղութիւն մըն էր ինքնին եւ անոր ամէնէն ընդվզեցուցիչ դրուագներէն մէկը եղաւ այն անհաւատալի պարագան, որ մեզի հետ Չանղըրը աքսորուած հայ սեղանաւոր մը, Յովհաննէս Թէրլէմէզեան, դատարանին առջեւ բարի վկայութիւն տուաւ ի նպաստ այդ մեծ ոճրագործին, ինչպէս արդար զգուանքով մը արձանագրեցին Պոլսոյ այդ ատենուան հայերէն թերթերը:

\* \*

Դանիէլ Վարուժանի եւ իր չորս ընկերներուն սպանութեան պարագաները ամէնէն զարհուրելիներն են, որոնք մխուած են մեր յի-

չողութեան մէջ, այնքան որ ոմանք թերեւս տարուին խորհելու, թէ Ապրիլեան Եղեռնի սկզբնական զոհերուն, այսինքն Պոլսէն և շրջականերէն Այաչ, Չանղըրը եւ Սուլթանիէ աքսորուած մտաւորականներուն եւ ընկերային զանազան խաւերու պատկանող անհատներուն ու քիչ ետքը վաւառներու խորը սպաննուած շատ աւելի բազմաթիւ անոնց բխտակիցներուն մէջ ոչ ոք նոյնքան ահաւոր ու խելայեղիչ վախճան մը ունեցաւ:

Այս մտածումը հիմնովին սխալ է: Այդ բոլոր սպանութիւնները, ամէն տեղ եւ ամէնուն համար, կատարուեցան նոյն խուժուժ պայմաններու մէջ, բայց մշուշի մէջ մնացին առ հասարակ, բացի մէկ քանի բացառութիւններէ, ինչպէս օրինակի համար Զօհրայի եւ Վարդղէսի նահատակումը, որուն զահանդական պարազաններուն կարելի եղաւ տեղեկանալ մանրամասնաբար:

\*\*

Վարուժանի եւ Տոքթ. Ռ. Չիլինկիրեան-Սեւակի խումբը նահատակուելու համար ճամբայ չհանուած, Մէհմէտ Իզզէթ պէյ պատուոյ խօսք տուած էր Տոքթ. Ռ. Չիլինկիրեանին, թէ ողջ-առողջ պիտի հասնի Պոլիս եւ թէ որեւէ վտանգ չկայ ոչ իրեն եւ ոչ ալ իր ընկերներուն համար: Ըսեմ, որ Տոքթ. Ռ. Չիլինկիրեան շատ յարդ կը վայելէր Չանղըրըի մէջ: Մեզի հետ դտնուող բժիշկները մեծ մասով դացեր էին: Ինքն ալ չափազանց համակրելի էր եւ ասկէ դատ միւթէսարըՔ ԱսաՔ պէյը ազատեց թունաւորուած ատենը, որով ձեռքէ ձեռք կը լսէին զինքը:

Եւ սակայն, հակառակ Իզզէթ պէյի խոստումին, սպանութիւնները դործուեցան: Իզզէթ պէյ, այս եղածը լսելուն պէս կատղած է: Յայտնաբար ամբաստանած է տեղւոյն իթթիհատականները, որոնք իրմէ ղէնք ուղեր էին եւ չկրնայով ստանալ, հաւաքեր էին քաղաքի բնակիչներէն: Որովհետեւ, երբ ընդհանուր զինահաւաքութիւն եղաւ, Հայոց ղէնքերը վար դրին, նոյնիսկ յետին դաշոյնը, իսկ Թուրքերուն ղէնքերը, նոյնիսկ արդիւլուածները, վերադարձուցին նոյնութեամբ: Բարկացած՝ Իզզէթ պէյ անմիջապէս հեռադիր մը կը ղրկէ Գասթէմունի Ռէշիտ փաշային, բողոքելով եղածին դէմ եւ աւելցնելով, որ «նամուսը աւփէրիէմի փայմալ էթտիլէր» (զինուորական պատիւս ոտնակոխեցին): Եթէ այս բողոքը եղած չըլլար, ապահովաբար պիտի սպաննէին բոլոր միւս մնացածները: Իզզէթ պէյ չբաւականացաւ բողոքի այս հեռադրով, այլ ինք անձամբ գնաց Թիւնէյ, քննութիւն կատարեց եւ Քիւրտ Ալոյէն զատ միւսները, ինչպէս, փոլիս Սիւլէյմանը ձերբակալելով ղրկեց Էնկիւրի, ուր անոնք ձեւական դատապարտութեան մը միայն ենթարկուեցան, այն ալ այն պատճառով, որ Պոլսոյ դերմանական դեսպանատունը պահանջած էր սպանիչներուն պատժուիլը:

Վարուժանէն եւ Ռ. Սեւակէն դատ, միեւնոյն խումբին միւս



երեք նահատակները եղան Օննիկ Մաղաղաճեան, երկաթագործ Վահան Քէհեայեան եւ Պոլսոյ Օրթագիւղէն հացագործ Արթին ալա :

Նոյն օրը, ոճրագործներու նոյն խումբին կողմէ, Թիւնէյի մէջ սպաննուած էին նաեւ մէկ Հայ եւ մէկ Յոյն ինէպոլուցիներ, որոնք էնկիւրի կ'երթային իրենց զինուորական ծառայութիւնը կատարելու համար : Հայերը երկու հոգի էին, բայց մէկը յաջողեւ էր փախչիլ եւ Չանղըրը հասնելով լուրը տարած էր : Իզդէթ պէյն էր դարձեալ, որ այս անգամ, իբրեւ «ախօր աւփէր շիւպէսի բէյիսի» (զինուորագրութեան զրասենեակի պետ), քննութիւն բացած էր նաեւ այս մսլանութեանց մասին :

\*  
\*\*

1919 Դեկտեմբերին, Իթթիհատի Չանղըրըի պատասխանատու քարտուղար ձէմալ Ուղուզ պէյ, որ Վարուժանի եւ ընկերներուն սպանութեան դործը կաղմակերպած էր, եւ ասոր պործակիցը՝ Չանղըրըի ոստիկան-զինուորներու հրամանատար համբաւաւոր քէմիք քըրան (ոսկոր կոտորող) Նուրէտտին պէյը հրապարակով դատաստանի ենթարկուեցան էսատ փաշայի նախագահութեամբ դումարուած պատերազմական ատեանի մը առջեւ, Պոլսոյ մէջ :

Ձէմալ Օղուզ Պոլսոյ մէջ ձերբակալուեցաւ անդլ. ոստիկանութեան կողմէ : Իր եւ իր Գասթէմունիի պաշտօնակիցին՝ Հասան Ֆէհմիի ջանքերով պաշտօնանկ եղած էր Գասթէմունիի կուսակալ Ռէշիտ փաշան, որ հակառակած էր Հայոց տեղահանութեան : Ձերբակալուած միջոցին Պոլսոյ թերթերը զրեցին, թէ կէս միլիոն ոսկիի հարստութիւն մը ունէր : Չանղըրըի մէջ ընդհ. տնօրէն էր պետական գուլպայի գործարանին, որ գլխաւորաբար զինուորներու յատուկ գուլպաներ կը պատրաստէր : Ամբողջ շրջանակին պարենաւորման գործերն ալ իր ձեռքէն կ'անցնէին : Ամբաստանուած էր նաեւ մեծ զեղծումներու համար, իր իսկ թուրք ընկերներուն կողմէ : Գտնուած է Ատանա 1909ին, կոտորածի տարին :

Ահա այս հրէջն էր, որ պատ. ատեանին կողմէ դատապարտուեցաւ 5 տարի եւ 4 ամսուան թիապարտութեան, 9 Փետր. 1920ին, իսկ Նուրէտտին՝ 6 տարի եւ 8 ամսուան, ի բացակայութեան դատուած ըլլալուն համար :

Այս դատաւարութեան ընթացքին վկայութիւն տուաւ Գասպար Չերաղ, որ կը դտնուէր Չանղըրըի աքսորականներուն մէջ : Գ. Չերաղ, Չանղըրըին վերադարձին տեսած էր այն վայրը, ուր մորթոտուած էին 5 նահատակները, բլուրի մը ստորոտը : Տեսած էր տարբաղադրուած դիակները նահատակներուն, որոնք շատ թեթեւ թաղուած էին եւ յորդառատ անձրեւները հողին մակերեսը հանած էին դանոնք : Ոճիրը զլուխ հանած էր չէթէնի ոստիկան Իսմայիլը, որուն հիւանդ աղջիկը մահէն ազատած էր Տոքթ. Ռ. Չիլինկիրեան :

Ձոհերը Պոլսէն հեռագրի կը սպասէին Պոլիս վերադարձուելու համար: Հեռագիրը եկած էր զոհերը ճամբայ չհանուած, բայց Օղուզ դաղտնի պահած էր զայն, որպէսզի գլուխ հանէ ոճիրը:

Նոյն ատեանին առջեւ վկայութիւն տուած էր նաեւ Օհան (նախկին վարդապետ) Կարապետեան, Վարուժանի եւ ընկերներուն, ինչպէս նաեւ Տիրան Քէլէկեանի սպանութեանց սլարագաներուն մասին:

\*\*

Ինչպէս ըսի, զինուորագրութեան Չանդըրլի ճիւղին պետը Իզդէթ պէյ, որ նախախնամութիւն մը եղած էր բոլոր աքսորականներուն համար, պատուոյ խնդիր դարձուց իրեն համար՝ դորժուած ոճիրը եւ ամբողջովին ընաջինջ ըրաւ Քիւրտ Ալօն եւ անոր հրամաններուն տակ գտնուող հրոսախումբը:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

\*\*


Դ. Վարուժանի, Ռ. Սեւակի և իրենց ընկերներուն սպանութեան մանրամասնութիւնները ճշդուեցան 1918ի զինադադարէն ետքը, երբ, իբրեւ ականատես խոստովանութիւններ ըրաւ՝ զանոնք դէպի սպանութեան վայրը փոխադրած թուրք կառապանը: Ձոհերը դաշունահար մորթուած էին Չանդըրլէն քանի մը ժամ հեռու անտառակի մը մուտքին, բլուրի մը ստորոտը, 26 Օգոստոս 1915ին:

### ՈԳԵԿՈՉՈՒՄ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻ ԿԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Քառասուն տարիներէ ի վեր, քառասուն անգամ, ամէն տարի, Ապրիլեան Սպասուներուն, հայ ժողովուրդը, իր պաշտամունքին ու յարգանքին երկիւղած տուրքը ընծայեց Մեծ Եղեռնի անհամար զոհերու յիշատակին, աշխարհի բոլոր աղատ երկիրներուն մէջ: Բոլորին ուղղուած համազգային այս յարգանքի կարգին, բաղմաթիւ այլ պատեհութիւններով եւ ձեռնարկներով առանձնապէս ոգեկոչուեցաւ նաեւ յիշատակը նահատակուած մեծանուն դէմքերուն: Տեղի ունեցան հանդիսութիւններ, տարեդարձային տօնակատարութիւններ, դասախօսութիւններ, եւլն., անոնցմէ շատերուն կեանքն ու դորժը ծանօթացնելու և յիշատակը պանծացնելու համար:

Նմանօրինակ հանդիսութիւն մըն էր ահաւասիկ այն մէկը, որ, յետ երկարատեւ նախապատրաստութեան եւ յուշատախտակի մը զետեղումով, տեղի ունեցաւ 9 Փետր. 1958ին Պելժիքայի Կան քաղաքին մէջ, ի յիշատակ հայ քերթողական արուեստի մեծադոյն ներկայացուցչին՝ Դանիէլ Վարուժանի: Այս հանդիսութեան շքեղութիւնն ու առանձնայատկութիւնը, սակայն, կը կայանար այն բացառիկ իրողութեան մէջ, որ ատոր իրենց մասնակցութիւնը կը բերէին նաեւ պելժ եւ Քրանսացի անձնաւորութիւններ, — պաշտօնական դէմքեր, դրողներ, փրոֆէսօրներ, արուեստագէտներ եւ

**OHANNES TERLEMEZIAN**



## Պ Ո Լ Ի Ս

### ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՔՍՈՐԸ

#### ՕՀԱՆՆԵՍ ԹԵՐԼԵՄԵԶԵԱՆ

1915 Ապրիլ 10-23ի երեկոյեան, Պոլիս, խանութիս մէջ զրաղած էի, երբ ոստիկան մը դալով զիս պահականոց առաջնորդեց, առանց թոյլ տալու մէկ վայրկեան որ գոյքերս հաւաքեմ:

Պահականոցին մէջ երկար սպասեցի: Հետզհետէ ուրիշ ձերբակալուածներ ալ եկան եւ առանց հարցաքննութեան շրկուեցանք կեդրոնական մեծ բանտը:

Այդ գիշեր եւ յաջորդ առտու ձերբակալուեցան հայ կարեւոր դէմքեր՝ մտաւորական, յեղափոխական դործիչ, բժիշկ, եւլն, մօտաւորապէս 200 անձ:

Յաջորդ գիշեր, Ապրիլ 11-24ին, բանտէն քամիոններով փոխադրուեցանք Սարայ-Պուռնու, ուր արդէն յատուկ շոգենաւ մը կը սպասէր: Շատեր վախցան թէ ծով թափուելու համար շոգենաւ կը դրուէին: Բայց Հայտար-Փնչա տարուեցանք եւ, մասնաւոր դնացքով, մեզ ճամբայ հանեցին դէպի Էնկիւրիւ: Գնացքին մէջ Ակնունին եւ ընկերները կ'ըսէին թէ. «Ոչինչ, սխալութիւն մը կայ: Վաղը Վարդգէսը թալանի գլխիմելով վերադարձուելու հրաման կ'առնէ մեզի համար»:

Էնկիւրիւ հասնելէ առաջ, Այաշի կայարանին մէջ զատեցին աչքի ինկող յեղափոխականները եւ շրկեցին Այաշի բանտը: Անոնցմէ քիչեր միայն ազատուեցան, իսկ մնացեալները ի վերջոյ չարաչար խողխողուած էին (Ակնունի, Պատակ, Տօքթ. Տաղաւարեան. Թ. Զ. Կարա-

եան, Հրանդ Կիւրճեան, Հրաչ Թիրեաքեան եւայլն) :

Այաչի կայարանէն Էնկիւրիւ տարուեցանք, ուր արտօնեցին որ Պոլլիս մեր ընտանիքներուն հեռագրենք: Վերջէն տեղեկացանք թէ հեռադիրները չէին շրկուած:

Էնկիւրիէն, բեռան կառքերով մեզ շրկեցին Չանղըրը: Երկրորդ իրիկունը Չանղըրը հասանք եւ մեզ բանտարկեցին քաղաքէն քիչ հեռու հին զօրանոցի մը մէջ:

Յաջորդ օրը, բոլոր բանտարկեալներս հաւաքուեցանք եւ հսկում կատարեցինք: Երեք վարդապետ — Կոմիտաս, Պալաքեան, եւ Յովնան Կարապետեան — Տէր-Ողորմեա երդեցին: Ամէնքս ծունկի եկած էինք: Կոմիտաս վրդ. շատ յուշուած էր եւ կ'արտասուէր: Այդ «Տէր-Ողորմեա»ն անմոռանալի եղաւ բոլորիս համար:

Ց-10 օր ետք, արտօնուեցանք քաղաքին մէջ բնակելու, պայմանաւ, որ ամէն օր ներկայանանք ոստիկանատուն:

Կոմիտաս եւ Յովնան վարդապետները, Տիրան Քէլէկեան, Յակոբ Քարեան եւ ես, Չէրքէզեան անուն Հայու մը տունը վարձեցինք: Աիւսներն ալ ուրիշ տուներ:

Յաջորդ կիրակի, Կոմիտաս վրդ. պատարագեց: Անոնք որ ներկայ եղած են իր պատարագին, գիտեն թէ ինչ հոգեգմայլ հանդէսի մը ներկայ կը գտնուէին, բայց այդ օրը Կոմիտաս գերազանցեց ինքզինքը: Երբ յուզուած եւ սքանչացած կ'աղօթէինք, Կոմիտասի արձակման հեռագիրը հասաւ: Առաջին աքսորեալն էր որ պիտի վերադառնար Պոլլիս: Իր ազատ արձակման հրամանը կը վերագրուի Ամերիկեան դեսպանին եւ կամ գահաժառանգ Մէծիտ Էֆէնտիի միջնարդութեան, որովհետեւ երկուքն ալ սիրահար էին գեղարուեստին:

Կոմիտասէն ետք, քանիներ եւս յաջողեցան հետգ-



հետէ ազատիլ եւ վերադառնալ Պոլիս, իսկ մնացեալները դէպի անապատ ճամբայ հանեցին եւ ամենքն ալ անխնայ սպաննեցին:

Չանդըրըի իթթիհատականներու պետին աղջիկը կը հիւանդանայ այդ օրերը եւ աքսորեալներէն Տոքթ. Տինանեանը կը կանչուի զինքը դարմանելու: Այդ միջոցին կը հասնի Տոքթ. Տինանեանի ազատ արձակման հրամանն ալ, որով, Տոքթ. Սեւակը կը յաջորդէ Տոքթ. Տինանեանին, յիշեալ աղջիկը դարմանելու համար:

Աղջիկը կը սիրահարի Տոքթ. Սեւակին:

Դուք ամենքդ ալ դատապարտուած էք մահուան կ'ըսէ աղջկան հայրը Տոքթ. Սեւակին: Կ'ուզեմ քեզ ազատել, պայմանաւ որ իսլամանաս եւ ամուսնանաս աղջկանս հետ:

Տոքթ. ը մեր տունը եկաւ խորհուրդ հարցնելու: Յովնան վրդ., Գէլէկեան եւ ամէնքս խորհուրդ տուինք իրեն, իսլամութիւնը ընդունիլ եւ ամուսնանալ: Ապագային, երբ պարագաները փոխուին, ըստ այնմ վարուիլ: Ըսինք թէ իր մահը ոչ մէկ օգուտ կը բերէ ոչ ազգին, ոչ իր ընտանիքին:

Չեմ կրնար համոզուիլ այն գաղափարին հետ, ըսաւ Տոքթ. Սեւակը, որ մահէն վախնալով ուրանամ ազգ եւ ընտանիք:

Եւ նախընտրել մեռնիլ...

Պոլսոյ մէջ, կնոջս եւ բարեկամներու դիմումին շնորհիւ, իմ ազատութեան հրամանն ալ եկաւ: Տոքթ. Սեւակ, Վարուժան եւ Գէլէկեան յանձնարարեցին որ Պոլսոյ մէջ այցելեմ իրենց ընտանիքներուն եւ հաղորդեմ թէ ինչ վտանգաւոր դրութեան մէջ են, մանաւանդ Սեւակին տիկնոջ որ Չուիցերիացի էր, որպէսզի դիմէ

գուլիցերիական դեսպանատունը: Դժբախտաբար դէպքերը տարբեր կերպարանք ստացան եւ հաղիւ 47 օրէնյա շողեցայ Պոլիս վերադառնալ: Աքսորի յիշեալ թանկագին ընկերներս, մեկնումէս ետք արդէն սպաննուած էին:

Ազատութեան հրաման ստացողներէն վերջինները եղանք, Յակոբ Քարեանը, ատամնարոյժ Վահան Ալթունեանը եւ ես:

1915 Օգոստ. 6ին Չանղըրէն մեկնելով, Օգոստ. 8ին Էնկիւրիւ հասանք: Նրոյն օրը անծանօթ ուղղութեամբ ճամբայ հանուած են մեր միւս ընկերները, բացի 10-12 անձէ: Արամ Անտոնեանը որ աքսորուածներուն հետ էր, բարեբախտ արկածով կ'ազատի մահուանէ: Բեռան կառքի ցնցումներէն նեղուած, երբ կը փորձէ դիրք փոխել, կառքէն կ'իյնայ եւ ծանրապէս կը վիրաւորուի: Ձինքը մեր կառքը փոխադրեցին եւ տարինք Էնկիւրիւ, ուր երկար ատեն հիւանդանոց մընալով ազատեցաւ:

Հակառակ մեր ազատութեան վճռին, Էնկիւրիւի դաժան կուսակալը տեղւոյն կաթոլիկ Հայերուն հետ մեղբանտարկեց եւ Օգոստ. 17ին ճամբայ հանեց դէպի սպանդանոց:

Բանտէն դուրս կը կանչէին չորսական հոգի: Կը կարծէինք որ հարցաքննութեան կ'երթանք, մինչդեռ դուրսը, Էնկիւրիւի կառավարական պաշտօնեաներուն ներկայութեան, 8-10 մարդիկ վրանիս յարձակեցան եւ մեր բազուկները իրարու կապեցին: Այսպէս, կարուան կազմեցինք 750-800 անձ եւ ճամբայ ելանք: Տեղացի Հայեր, որոնք գիտէին թէ իրենցմէ առաջ 400 հոգի նոյն ճամբուն վրայ ջարդուած են, սկսան լալ եւ ողբալ: Այդ օրը անակնկալ դէպք մը պատահեցաւ:



ՎԵՐԱԾՆՈՒՆԻ

Երևան, բնիկ եւ հայրենադարձ ընտանիքներու աղջիկներ

Մեր ետեւէն սրարչաւ հասան քանի մը ձիաւոր եւ մեզ առաջնորդող ժանտարմաներուն յանձնեցին հրամանա- գիր մը: Ժանտարմաները, փոխանակ մեզ ջարդելու, Գարակէտիկ զիւղը տարին, ըսելով որ ներման արժա- նացած ենք և աղօթենք կայսեր համար: Ի վերջոյ իմա- ցանք թէ պապին Պոլսոյ նուիրակը, Մօնսէնէօր Տօլէին տեղեկանալով էնկիւրիի կաթողիկէ Հայերուն սպառնա- ցող եղերական վախճանը, կը դիմէ Աւստրիոյ դեսպա- նին, այս վերջինն ալ՝ Թալաթին եւ կը յաջողի կա- թողիկ Հայերը փրկել: Կուսակալը երեք օր բանակցելով կը յաջողի որոշում ձեռք բերել որ կաթողիկ Հայերը փոխանակ էնկիւրիւ վերադառնալու, քշուին Միջա- գետք:

Օգոստոս 20ին, Գարա-Կէտիկ զիւղէն մեկնելով եւ ճամբուն վրայ սահմակեցուցիչ դէպքերէ եւ տեսարան- ներէ անցնելէ ետք, անօթի, ծարաւ 21 օր քալելով հա- սանք Պօզանթի:

Ժանտարմաները ազատ կը ձգէին որ մեր սարսա- փելի ծարաւը յազեցնենք ճահճային ջուրերէ: Մա- քուր առուններէ խմել յանդգնողները անխնայ կը ծե- ծէին:

Պօզանթիի մէջ գտանք ամէն կողմէ աքսորուած Հայերու բազմութիւն մը: Այդտեղ տեսայ օսմանեան հանրային պարտուց հայ պաշտօնեայ մը, որուն երկու սիրուն աղջիկները ժանտարմաներու խէնէջ յարձակման կ'ենթարկուէին: Խեղճ հայրը դրամ խոստացած էր զա- ւակները փրկելու համար, բայց չէր կրցած գոհացնել ջարդարարները:

Պօզանթիէն քշուեցայ Տարսօն, ուր, քաղաքէն դուրս, հաստատուած էր տարագրեալներու ընդարձակ վրանաքաղաք մը: Անընդհատ կը հասնէին նոր կարա-

ւաններ եւ մաս առ մաս կը ճամբուէին դէպի Տէր-Ձոր :

Օր մը յաջողեցայ վրանաքաղաքէն Տարսոն երթալ եւ հեռագրել Պոլիս : Կինս եւ բարեկամներս կրկին դիմումներով կը վերստանան ազատութեանս հրամանը :

Տեղւոյն սէվֆիաթի (աքսորի) տնօրէնը, հաղարաւոր տարագիրներու մէջ զիս դտաւ եւ ըսաւ . «Եթէ յիսուն դեղին ոսկի տաս, քեզ կը վերադարձնեմ Պոլիս : Եթէ չի տաս, անմիջապէս ճամբայ կը հանեմ դէպի անապատ եւ կը հեռագրեմ որ՝ այդ անունով անձ չի կայ այստեղ» : Եւ թոյլ տուաւ որ քաղաք երթամ ու հեռագրով դրամ ուզեմ Պոլսէն : Աքսորակից ընկերներս, Քարեանն ու Ալթունեանը ինծի հետ քաղաք եկան եւ տեղւոյն գայմազամին իմացուցին եղելութիւնը : Գայմազամը Պոլսէն հարցուցեր է մեր երեքին արձակման մասին եւ հաստատական պատասխան ստանալով, կառք մը վարձեց եւ մեզ վերադարձուց երկաթուղւոյ կայարանը որ մէկ օրուայ ճամբայ էր :

Սեպտ. 19ին մեկնեցանք Տարսոնէն եւ 22ին հասանք Պոլիս, Հայտար-Փաշա :

Փրանսա, 1951



**PUZANT KETCHIAN**



ԹԵՈՐԻԿ

**ԱՄԵՆՈՒՆ ՏԱՐԵՅՈՅՅԸ**

Ժ. Զ. ՏԱՐԻ

**1922**



ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. ՅՈՎԻՏՅԱՆՍԿԻ

Կ. ՊՕԼԻՍ

Գ. ԻՆ

Վրու՛ 150, Ծրանք 15

Եկին 5, Տօլար 1,50

## ԴՐՈՒԱԿ ԱՔՍՈՐԻ ՇՐՋԱՆԵՆ

ՏԻՐԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ այն Հայերէն էր որոնք իրենց տաղանդով, արուեստով, կամ հանրային ծառայութիւնով, մեր «հարեւանաներուն տուին բարձր գաղափար մը հայ ցեղին բնագունակութեանց վրայ:

Երկու տարբեր շրջանի մէջ ծառայեց թուրք մամուլին: Թէպէտ, թուրք թերթի մէջ գրելու ստիպուած, հնարք կը գտնէր, սակայն, Ազգային Դատին դէմ բան չգրելու, բուն թուրք գրչակներու թողլով այդ հոգը:

Առաջին շրջանն էր Համիտի օրով, Հայկական Հարցին սկիզբները,



**Տիրան Քելէկեան**

երբ Հնչակեան հովը գերակշիռ կը փչէր Գումգափուի Պատրիարքարանին մէջն ու շուրջը, և իբր թարգման-քարատուղար, կամ յարաբերութեանց միջնորդ Իզմիրլեան Պատրիարքին քով կը գտնուէին միանգամայն թէ՛ Յարութիւն Մօստիշեան թէ՛ Քելէկեան: Սասնոյ ջարդը տեղի ունեցած էր, սկիզբն էր երկանց, բայց համատարած կոտորածն սկսած չէր: «Մայիսեան» բարենորոգմանց Ծրագիրը «կը ծեծուէր» իսկապէս, իր յօդուածները, իր ենթականերէն ալ առաջ, սրբուելով, ջնջուելով: Եւ Սըր Ֆիլիք Քըրրի, Թարապիոյ դեսպանատան պարտէզին մէջ, կար-

տըն բարդիին օրը, թուրք և եւրոպացի պետական մարդոց աչքին առջեւ, կը ճեմէր իր թեւը տուած «Երկաթեայ Պատրիարք»ին, զոր չէին կրնար շլացնել Համիտի տկանակուռ շնորհները, ոսկեղինիկ խոստումները, կամ Միւնիխ պէյի հրապուրանքները (\*): Թո՛ղ Հայերը, կային թուրքեր ալ որ

(\*) Հայերը այն ատեն կրնային ըսել իրենց Պատրիարքին համար ինչ որ քիչ առաջ Իռլանտացիք ըսեր էին իրենց մեծ կուսակցապետին համար.—

Welcome to Parnell, Ireland's glory,  
Who can't be cowed by Whig or Tory.

(Բարի գալուստ Բառնէլին, Իռլանտայի պարծանքին,  
Չոր չեն կրնար վախցնել ո՛չ Հուիկը, ո՛չ Թորին :)

Սա՛ տարբերութեամբ, անշուշտ, որ Բառնէլ, աւելի աղէկ կը ճանչնար Անգլիացիները քան Իզմիրլեան՝ Թուրքերը:

կը կարծէին թէ այս անգամ բան մը պիտի արուէր Հայերուն (\*): Սապաւի խմբագրատան մէջ, քրոնիկագիր Սելանիկցի Թէվֆիգ այս ոտաւնաւորը կը զրուցէր իր հայ պաշտօնակցին վրայ. —

Ղըպթա իթաի Շահը իրան պախթընա,  
Չըգաը Տիրան էրմէնիսթան թախթընա:  
(Նախանձեցաւ անոր բախսին Շահն Իրանի),  
Ահա՛ ելաւ Տիրան ի գահն Հայաստանի:)

Բայց երբ Համիտ, իր կռնակը Ռուսիոյ տուած, և Գերմանիոյ և Աւստրիոյ հակայեղափոխական և հակահայ դիրքէն քաջալերուած, առ ոչինչ գրեց Անգլիոյ ստիպումները, և արեան հեղեղներու մէջ խեղդեց Հայկ. Խնդիրը, Բէլէկեան շունչը Նեղոսի կողմն առաւ, Գահիրէի Ֆրանսերէն թերթի մը սիւնակներուն մէջ, և այն ատեն Սելանիկցին կրկնեց իր երկտողը, Չըգսը բային տեղ այս անգամ գործածելով ուրիշ բայ մը նոյնայանգ բայց անթարգմանելի, թուրք բառամթերքին սեփական ապրանք կարգ մը ասու թեանց նման:

Կարծեցեալ « Ազատութենէն » ետքը, Բէլէկեան վերագարձաւ Սապաւին, և մեզ հետ, 1915ի Կարմիր Կիրակին, Պոլիսէն տարագրուած «մտաւորականներուն» մէջ էր: Անոնք որ հայ թերթերու մէջ միայն գրած էին, կը զարմանային իրենց հետ նոյն խստութեան ենթակայ տեսնելով գրող մը որ յաւէտ թուրք մամուլին մէջ անուն շահած էր, և թուրք նոր սերունդին ու ուսուցիչներէն էր թէ՛ գրչով թէ՛ դասաւ խօսութեամբ Օսմ. Համալսարանին և Սպայակոյտի վարժարանին մէջ: Սերտ յարարերութեան մէջ իթիլաֆի հետ բայց վստահելի էր թէ՛ Մահմուտ Շէվքէթ փաշային, իթիլահատի հերոսին, թէ՛ Եպարքոս Քեամիլ փաշային, իթիլահատի հակառակորդին, նաեւ գահաժառանգ Սուսուֆ Իզզետին էֆ.ին, որ չէր համակրած Թալատը-լինվէր խմբակին, որուն զոհն եղաւ ի վերջոյ: Թէեւ ֆրանսասէր և անգլիասէր ճանչցուած, թուրք թերթի խմբագրի գիրքը իրեն դիւրացուցած էր յարաբերութիւնը նաեւ գերման դեսպան Վանիկէնհայմի հետ: Քեամիլ փաշա իր վերջին Եպարքոսութեան օրով Բէլէկեանը Սուլթան Բեշտի ներկայացնել տուաւ, որպէս զի Կայսեր բերնէն լսելիք խօսքերը թուրք հասարակութեան հաղորդէր, ոյժ տալու համար իթիլաֆի կառավարութեան:

Չանկըրըի զօրանոց-բանախին մէջ մէկ սենեակ կը դրաւ էինք, Բէլէկեան, Կոմիտաս Վարդ., Պալաքեան Վարդ., Յովհան Վարդ. Կարսպետեան, Հայ-Աւետ. Վեր. Բերովբէեան, Տքթ. Թորգոմեան, վաճառական Յակոբ Գորեան, սեղանաւոր Յովհ. Թէրլէմէզեան, և Բիւզանդիոնի խմբագիրը:

(\*) Տերութիւններէն վերջապէս ճանչցուած Պուլկարիոյ իշխան Ֆերտինանտ էրբ Պոլիս եկաւ «իր մեծարանքը մատուցանելու զերիշխան վեհապետին», Թուրք ջոկատ մը կամուրջին զլուիը զինուորական բարեւ կու տար: Տարեց Թուրք մը քովինին կ'ըսէր դժգոհ դէմքով. «Շատ չանցած մենք այս. . . ապուրը պիտի ուտենք Հայերուն համար ալ»:

Ինչու մեզ բերեր նետեր էին այս գարշելի տեղը, ուր քիչ առաջ  
ժանտառենդը աւեր գործած, զօրքերը հեռացուցած էին, բայց շէնքը  
չէին ապանեխած: Ի՞նչ պէտք էր բնէինք, գո՛նէ քաղաք փոխադրուելու  
համար: — Աղօթելու մասին, ամէնքս համամիտ գտնուեցանք. բայց երբ  
թելադրուեցաւ թուրքերուն հետ յարաբերութեան մտնել, անոնց միտքը  
հասկնալու և ինքզինքնիս պաշտպանելու համար, Տալ-Քեաֆ (Տ. Ք.)  
դէմ կեցաւ:

«Եկեսցէ՛ք աղօթքը սրտարուչ եղաւ: Քարայատակ մեծ դօփուշին  
մէջ, 130 Հայեր ցուրտ գիշեր մը, փոքրիկ կանթեղի մը աղօտ լոյսով  
աւելի խորունկցած ստուերներուն մէջէն զիրար հազիւ նշմարելով, «Հան-  
գըստեան» ժամերգութիւն կը կատարէին, «Հաւատով Խոստովանիմ»ով,  
«Լինկալ քաղցրութեամբ»ով, «Տէր-Ամենակալ»ով, «Տէր Ողորմեա»ով,  
հոգինին իրենց ներսիդին հալած, զգայարանքնին թմրած, անստուգու-  
թեան մղձաւանջովը լլկուած իրենց միտքը չկրնալով կամ չուզելով  
կուահել թէ վաղբւան լոյսը ո՛րպիսի նոր աղէտներ կը վերապահէր: Պահ  
մը յառաջ մեզի հետ սաստիկ կասկածով վարուող թուրք պահակներ  
պատուհաններուն առջեւ շարուած, հետաքրքիր կը դիտէին Պրլսէն եկած  
«Ֆէտայի»ներուն ջերմեւանդութիւնը: Եւ երբ վեր. Քերովբէեան աստ-  
ուածայւն այցելելութիւն հայցեց մեր տառապեալ ազգին, և երկնաւոր  
հրատարութեան յանձնեց մեր հեռաւոր սիրելիները, որոնցմէ այնքան  
եղերական կերպով անսկիւկալ բաժանում մ'ունեցեր էինք, ամէն աչքեր  
լեցուեցան, և արցունքը, զոր բարեգիւպօրէն կը սքողէին համատարած  
ստուերները, թւթեւացում բերաւ ծանրաբուն սիրասրու:

Մեր մէջ կային երեք վարդապետ և երկու քահանայ, բայց աշխար-  
հականներէն ալ կը գտնուէին «Հաւատով Խոստովանիմ»ը ծայրէ ի ծայր  
անթերի արտասանողներ, — ինչպէս տարեց Լեւոնի մը, զոր ճանչցայ  
կեդր. Բանտին բակը, ձերբակալման հետեւեալ օրը, երբ ծառի մը տակ  
նստած, ինչնիրեն բաներ մը կ'ըսէր: Հետաքրքրուելով, անունը հարցուցի:  
Երբ «Վրբակու» քաւ, մտքի ցնցում մ'ունեցայ «Մակաւնո՛ւնի» շեշտեցի  
իւրչնո: Երբ «Փալիսպիսի» բառ, ապահովագուցի զինք թէ սխալմամբ բեր-  
ուած էր: Խաթակէն և Ակնուհիէն ստուգելով թէ վրթանէս Փափազեան  
բարեբախտարար հեռացած էր թուրքիայէն և Պրլքէշի դպրոցին տնօ-  
րէնն էր, որոշեցինք անոր տեղ սխալմամբ բանտարկուած մարդը ազա-  
տել: Որով հետեւ նոյն գիշերն իսկ հանուեցանք Պրլսէն, Չանկըրի զօրա-  
նոցին մէջ էր որ հրամատարին բացատրեցի թէ բատիկանութեան վնասածը  
երիտասարդ հեղինակ և բուսուցիչ վրթանէս Փափազեան ծանօթ անձն էր  
անչուշտ (\*), մինչ մեզի հետ բերուածը իր կեանքը մանիֆթութւրայի  
կրպակին, եկեղեցիին և իր տան մէջ անցուցած ծերունի մ'էր: Հրա-  
մատարը իր ձեռնհասութենէն վեր նկատեց սխալին սրբադրումը: Կառա-

(\*) «Կ.» ստորագրող Բիւզանդիոնի Թղթակիցն ի Թիֆլիս, Կալիցինի բռնա-  
պետութեան օրով, Հայ Եկեղեցւոյ կալուածներուն ու դպրոցներուն զբաւման  
տաղիսպին տոնն:

վարչին մատուցուած աղերսագրով մը խնդիրը ներքին գործոց պաշտօնարանը ներկայացուեցաւ, և մարդը հազիւ ազատեցաւ Չանկրըրը մնացած տարագրեալներուն խմբովին տեղահանութենէն ու բնաջնջումէն: Այնքան շփոթած շլմորած էր յեղակարծ հարուածին տակ, (\*), որ երբ Պոլիսէն 700 քիլոմէրը հեռի Չանկրըր հասնելիս իրեն քսի, շատացաւ պատասխանելով. «Քանի որ ձեռքերէ հասեր ենք (\*\*), բերաւ մօտ է ասկէ, ինչո՞ւ տուներնիս չերթանք այլ ևս:—Այս տարի (1921) ուրախ եղայ զինք ողջ առողջ տեսնելով «Արեւագալ»ի երգեցողութեանց, թէ՛ Ս. Երրորդութիւն, թէ՛ Գերեզմանատան եկեղեցին:

Հրամատարը մեզի ներկայացուց երկու թուրք և մէկ հայ վաճառական, որոնց միջոցաւ կրնայինք կատարել մեր գնումները: Հասկցանք որ այս վատառողջ շրջանակէն գուրս ելլել չի կար: Բայց փրկութիւնը հոն մնալուն մէջ չէր: Ընկերներու սուղարկեցի արտօնութիւն խնդրել թուրքերուն այցելութիւնը փոխարինելու, տեղացիներուն հետ յարաբերութեան մտնելով նպատակաւ գաղտփար մը տալու համար մեր վրայ, և Պոլիս հեռագիր զրկելու համար մեր ընտանիքներուն: Քէլէկեան հակառակեցաւ:

«Հեռի կեանք թուրքերէն, հեռի՛: Նե՛ Շաւրն շեֆերի, ոհ...: Մեր « ազգային արժանապատուութիւնը պահպանենք այս հայաժամանակն ղէմ: « Թուրքերուն ո՛րչափ աղէկ երեւոյ ուզենք, օգուտ չունի: Իրենց միտք « դրածէն չեն շեղիր: Թուրք ժողովուրդը կուրօրէն կը հետեւի վերէն եկած « ներքնչումին: Ինքնին հեղինակութիւն մը չունի որ անոր հանրային կար « ծիֆր շահիլ փորձենք: Մեզի հոս նետեցին: Թո՛ղ իրենք այս տեղէն հանեն « մեզի: (\*\*\*) Թուրքերուն առջեւ չնուստանանք: Անոնց ժպիտներէն ալ « չխաբուինք: Վերապահ, լուռ, զգոյց դիրք մը պահենք անոնց հանդէպ:»

(\*) Մենք, աւելի կամ նուազ «քաղաքական» անձեր, ա՛լ վարժուեր էինք ձերբակալուելու, կամ գէթ հարցուփորձի ենթարկուելու: 1893էն մինչեւ 1915, ես արդէն 15 կամ 16 անգամ Ռատիկանութենէն ուզուած էի լրագրական, քաղաքական, կուսակցական խնդիրներու վրայ բացատրութիւն տալու և եղած քուտեանց ու զրպարտութեանց պատասխանելու համար, և երկու անգամ ալ բանտարկուած էի: 1915 ապրիլ 11ի ճիշդ կէս զիշերին երբ երեք ոստիկան զուռս զարկին, հասկցայ որ կա՛մ բանտարկութիւն կամ աքսոր էր այս, ու ըստ այնմ հագուելով և պէտք եղած նախահոգ կարգադրութիւններն ընելով ճամբայ ելայ, մինչ բարի ծերունին բոլոր կեանքին մէջ գործ ունեցած չէր կառավարութեան հետ: «Երանի՛ այն ազգերուն որոնք պատմութիւն չունին» ըսուեր է: Նոյնն աւելի ճշմարիտ է անհատներուն համար:

(\*\*) Քեանատանէի մօտ, Բերայէն երկու ժամ:

(\*\*\*) Տե՛ս Գործի Առաջիւղոց, ԺԶ., 37:— Բայց Պօլոս Առաքեալ Հռոմիայի քաղաքացի էր: Ներկայիս մէջ նոյն զիրքը բռնող կրնայ համարուիլ Բրիտանիան հպատակը: Եւ մենք տեսանք Քուտ-էլ-Ամարայի մէջ գերի ինկած զօրաց պետին մեծարանքները թուրքերուն: Զօր. Թաուէնզէնտ զիտէր, սակայն, որ իր լոկ անձնական քաղաքավարութիւնը չ'ը դպչեր իր ազգին քաղաքականութեանը:



Աղուո՛ր շարժուձեւ, պատասխանեցի: Բայց ամէն Հայ, անհատապէս թէ հաւաքապէս, նախ և առաջ ինքնապաշտպանութեան միջոցը պէտք է խորհի: Անմիջական վտանգը հեռացնելը առաջին գործն է: Նախ ուզեն, յետոյ փիլիսոփայել կ'ըսէին հին Հռովմայեցիք: Մենք ալ հիմա պէտք է ըսենք. Նախ ողջ մնալ, յետոյ ֆաղափականութիւն ընել: Մնաց որ քաղաքավարութիւնը երբեք չի վնասեր քաղաքականութեան: Աւստրալիային մէջ թուրքերը և տեղային իշխանութիւնը սիրաշահիլ փորձելով մենք անհասապէս կը գործենք: Ազգին քաղաքականութիւնը յառաջացնող կամ խաթարող բան մ'ընելու կարող չենք: Ազգին դատը հերքող գիր մը ստորագրելու չենք այս տեղ: Ինչպէս պատերազմի ատեն գերիներուն, ուրիշ ժամանակ ալ բանտարկեալներուն, կամ իրենց ազատութենէն զրկուած անձերուն խօսքն ու գիրը հանրային նշանակութենէ զուրկ են: Իմ առաջարկս է որ պատուաւոր, օրինաւոր, անվնաս մարդիկ ըլլալին խօսքով ու գործով ցուցնենք այս տեղի թուրքերուն, որպէս զի մեզի հետ կարելի եղածին չափ աղէկ վարուին: Հրամանները Պոլիսէն կու դան, այո՛: Բայց կը գործադրուին տեղւոյն վրայ, տեղային ազդեցութեան ու մտայնութեան չափովն ու ձեւովը: Առանց հրամանի կամ հակառակ հրամանի ալ շատ բաներ կ'ըլլան: Նո՛յն իսկ Համիտի հրամանները, 1895ին և 1896ին, ամէն տեղ միեւնոյն կերպով չգործադրուեցան: Եւ ինչէ՞ն գիտենք որ մեզի համար յոռ ճրամաններ եկած են արդէն: Գուցէ մեզի այս տեղ նետեցին, ու ա՛լ չեն զբաղիր մեզմով: Մեզի անկ է շարժիլ, բան մ'ընել այս շրջանակէն դուրս ելլելու և գէ՛թ վիճակինս հասկնալու համար: «Հոյը դիտողը չի կրնար ցանել, եւ ամպերուն նայողը չի կրնար հնձել:» (\*)

Տարագրեալներու մէջէն յանձնախմբեր կազմուեր էին հսկելու ներքին կարգապահութեան, պարենաւորման, մաքրութեան և արտաքին յարաբերութեանց: Այս վերջին մարմնոյն մէջ Գէլէկեանի հետ ես ալ կայի: Թէեւ մեր երկուքին տեսակէտները կը տարբերէին, բայց յոռոտեցաւ որ ես մտադրածիս պէս կարենամ գործել: Նախ և առաջ, հրամատարին էք թահադէրու մին կը իման ըսելով, արտօնութիւն առինք զօրանոցէն դուրս գտնուող վազուն ջուրէն օգտուելու, պայմանաւ որ 20 հոգիէ աւելի դուրս չելլենք: Ապա, մեզի եկող թուրքերուն փոխադարձաբար այցելելու արտօնուեցանք: Քսան հոգի նախ գացինք ոստիկան զօրաց պետին, որ Պոլսոյ մէջ ձէմիլ փաշայի բրածին պէս, Չանկըրը հանրային պարտեզ մը յարգարել կ'ուզէր: Քեզ պաշա շխշիտ թարագ: Պաղ բնդունելու թիւն մ'ըրաւ, յիշելով թէ տեղ տեղ Հայերուն բրածը չէր վայելեր, թէ Հայոց հաւատարմութեան հաւաստիքը հայտնաբեր են եղեր միայն: Մեղմօրէն պատասխանեցի թէ իր յիշած պարագաները ցաւ և զարմանք կը պատճառեն մեզի, որովհետեւ Պոլիս եղած ժամանակ հակառակը կարգացեր էինք թերթերուն մէջ, թէ էնվէր փաշա արեւելեան

(\*) Ժողովող, ԺԱ. 4:

գաւառներէն դարձին գոված էր Հայրց քաջութիւնը Գէօօրիւ քէօյի ճակատամարտին մէջ և այլուր, և խնդակցութեան ու գոհունակութեան գիրեր ուղղած էր Գոնիայի առաջնորդին ու Պոլսոյ Պատրիարքին: Այսու հանդերձ, ամէն ազգի մէջ ամէն տեսակ մարդիկ կը գտնուին: Միթէ իսլամ ցեղերուն մէջ Տէրութեան գլխու ցաւ պատճառողներ քիչ եղած են մանաւանդ Հուրիյէթէն ի վեր: Տէրութիւնը գիտէ, ևսկայն, որոշել արդարը մեղաւորէն: — «Ատոնք շիտակ են, յարեց սպան, բայց Հայերէն մենք տարրեր քնթացք մը կ'սպասէինք քան ինչ որ հիմա չորս կողմէ մեր տկանջին կը հասնի»:

Խօսքը տնուշի կապիւրւ համար, իրեն ներկայացուցինք մեր մէջէն հայ-կաթոլիկ ճարտարապետ մը, Սպարապետութեան ծառայող, որ յանձն առաւ օգնել իր դարաստանին յորինման: Տէթ. Թորգմեան ալ, առջի օրուքնէ, հրաւիրուած էր դարմանելու հրամատարին կինը, որով ամէնէս առաջ քաղաք ելած էր:

Յետոյ այցելեցինք Թուրք Պոն-Մարշէն: Ընկերներու թելադրեցի բնաւ չսակարկել և վճարել ինչ որ ուզուի: Ներքնապէս, համոզուած էի որ յաճախորդը խաբելու մասին Թուրք խանութպանները, մանաւանդ գաւառի մէջ, ուրիշ ցեղէ իրենց մրցակիցներէն ետ կը մնան: Հոն չէ՛ Թուրք տարրին «գօրաւոր կողմը»: Ապա, այցելեցի Մահմեւա էֆ.ին, զօրանոց եկող վաճառականին: Ճիշդ այն պահուն, իլալի կը պոռային: Առի և բարձրաձայն կարգացի ու մեկնաբանեցի: Թուրքերը գլուխս ժողովեցան: Տուած բացատրութիւններէս ու Պոլիսէն բերած լուրերէս գոհ մնացին: — Կը կարծէք որ Թշնամին նեղուցէն անցնի»: — «Ժխտեցի, ընդլայնելով Բիզանդիոսի մէջ այն օրերուն յայտնած միտքս թէ «քանի որ Դաշնակիցները միեւնոյն ժամանակ թէ՛ ծովէն թէ ցամաքէն յանկարծակի յարձակում չըբին քանի մը կէտերէ միտնգամայն, և մասնակի ու դանդաղ շարժումներով առիթ տուին որ պաշտպան կողմը զօրանայ, իրենց յաջողութիւնը աւելի քան կասկածելի կը մնայ այլ եւս»: — Ունկնդիրներու սիրտը բացուեցաւ և լեզուն քակուեցաւ: Սիկար, խահուէ, թէյ յաջորդեցին իրարու: «Ձեզի համար ինչե՛ր կ'ըսէին, ու մենք ի՛նչ կը տեսնենք: Պոլիսէն ֆէտայիներ կը բերեն կոր, կ'ըսէին, շիրքուրու, մէջքը կաշի գօտի, գլուխը իւարիսիս, մինչ մենք կը տեսնենք որ դուք պրկեցի էֆէնտիներ էք ամէնքդ: Հոգ մի՛ ընէք, էֆէնտի: Մենք հիւրասէր ենք: Ձեզմէ առաջ այս տեղ բերեր էին իթիլաֆճիները: Սինոպ ալ զրկեցին: Ետքը թուր տուին: Ձերինն ալ անանկ բան մը պիտի քլայ, կուսակցական հակառակութիւն»: — Թուրք խանութպանը, իբրանսեաններուն հետ յարաբերութեան մէջ, հարցուց թէ Հաճի Մարութէ Աղան հետերնի՞ս է, կամ պիտի գա՞յ, որովհետեւ չուզեր որ զօրանոցը մնայ, տունը պիտի տանի: Աղի վարչութեան տնօրէնն ալ հարցուց Ոսկան էֆ. Մարտիկեանը, և յակտնէ յանուանէ Հանը. Պարտուց Վարչութեան հայ գլխաւոր պաշտօնեաները, զորոնք անպատճառ կ'ուզէր հիւրասիրել, էթէ գային:

Հասկացանք որ Չանկըրըն Թուրքերը իթիլաֆեան են մեծամասնաբար, իրենց վերջին Մէպուան ալ անանկ: Չանկըրըն գնդին հրամատարը, որուն իշխանութեան տակ էինք զօրանոցին մէջ, կառավարութենէն զրկանք տեսած, կը կարեկցէր մեզ, բայց ժանտարմոյի պետը ժէօն-Թիւրք էր, և հայատեաց: Կար նաև Իթիթիհասի ընդհ. քարտուղար մը, որ գուլ-պոյի գործատուն մը բացած էր Թրքուհիներուն համար: Այգեկեցինք, և պոլիսիսէն գուլեցինք իր յառաջդէմ ձգտումները: Բայց միութեարքօֆը ինչ գաղափար ունէր մեր վրայ: Ասիկա սուղեւելու համար, մեր հասնելուն շաբաթ օրը առանձին ներկայացայ, և հետեւեալ օրը խմբովին եկեղեցի գալով աղօթելու արտօնութիւն խնդրեց: Էս-Սալարու իսլայունն մին ևն նկիւմ: Իսլամութիւնը դիւրացուցած է յրիստոնեաններուն կրօնային պաշտամունքը: Աղօթողներէն չի վախցուիր:— Քանի՞ հոգի էք, հարցուց: = 130 մը կանք: — Ամէնքդ հայ էք: = Մէկ ըսողքական, և 4-5 կաթողիկ: — Այսչափ մարդ մէկէն ինտօր քաղաք կու գայ: = Եթէ թիւ որոշէք, ամէնքն ալ գալու կ'ըլլան, և զրկուողը կը դժգոհի, մինչ եթէ ազատ թողուք, որը կու գայ, որը չի գար: — Ձեր իսկական վիճակը տակաւին չեմ գիտեր: Պոլիսէն վերջնական հրահանգի կ'սպասեմ: Մնաց որ, այսչափ մարդոց վրայ հսկելու չափ ուտիկան չունինք: = Ստիկանի ինչ պէտք: Ո՛ր կրնանք փախիլ: Փոխադրութեան միջոցները դրաւ տած: Ո՛չ կառք, ո՛չ սայլ, ո՛չ ձի կայ այս տեղ: Իտնուածն ալ խիտ հըսկողութեան տակ: Պոլար մուհարիպիով սնած էֆէնաիններէս ո՛ր մէկը ոտքով պիտի կտրէ անցնի Չանկըրըն իր մէջը առնող սա լեռնաշղթան: Ինծի վստահեցէք ամէնքը: Մէկ հատը չի փախիր: — Անգամ մը խորհըրդակցիմ ուտիկանապետին հետ: Ե՞րբ եկեղեցի պիտի երթաք: = Վաղը առտու կիրակի, Գուսասար շերիֆի նամագին հոն գանուելու ենք: Ասիկա ձուռնայի նամագին չափ նուիրական է մեզի: — Ես այս իրիկուն լուր կը զրկեմ ձեզի:

Իրօք, նոյն իրիկունը փոլիսին մեծը զօրանոց գալով ծանոյց թէ սաւն հոգիի եկեղեցի երթալուն հրաման կայ: — Դիտել տուինք թէ քաղաք ելլելու համար 20-25 հոգիի հրաման արդէն կայ, ինչո՞ւ նուազ թոյլտուութիւն եկեղեցիի:

Երեսուն հոգիէ աւելի էինք առաջին կիրակին եկեղեցի գացողներս: Քառասուն տուն տեղացի Հայերը ամբողջ հոն էին: Երախտապարտ էինք իրենց բարեսրտութեան. որովհետեւ մեր զօրանոց հանիլը հաղիւ լսած, 40 ձեռք մաքուր անկողին բերած էին, որով 100 հոգի պատասպարուեցան: (\*)

(\*) Ես իմ մահիճս մեծ դժուարութեամբ հետս բերեր էի Պոլիսէն: Առաջին անգամ անով հանգստանալ վիճակեցաւ Գալէնիք, Էնկիւրիի ու Չանկըրըն միջեւ, որչափ կարելի էր հանգստանալ անկողինն ու վերմակը բաժնելով տասնեակ մը վիճակակիցներու հետ: Չանկըրըն զօրանոցին մէջ, անկողնի ընկեր ունեցայ Տքթ. ձէվահիրբեան, Բերայի ծանօթ լրագրավաճառ դժբախտ ձերունին Օհնիկեան, իր որդին, իր փեսան, նաև անձանօթներ որոնք «գէ՛՛՛՛՛ զլուինին դնելիք» տեղ մը կը վնտոէին:

Տեղւոյն քահանան ալ մեր խնդրանքով ժամագիրքերը առած զօրանոց եկած էր մեր գիշերային աղօթքը դիւրացնելու:

Երեք օր ետքը, երբ փողոցները կը պտըտէի, — զարմանալով թէ թուրք Միւթէսարքֆի մը պաշտօնավարած քաղաքը ո՛ր աստիճան զուրկ տգեղ, խարխուլ, խրդուբորդ, աղտոտ, վատառողջ, անուշ ջուրէ և օդէ զուրկ կրնայ եղեր ըլլալ, — Թաղ. Խորհրդոյ ատենապետ Յարութիւն էֆ. էն լսեցի թէ Հայերու թաղաք փոխադրման, թոյլտուութիւն կայ, և իսկոյն վարձելով իր իսկ մէկ կալուածք, եօթն ընկերներու հետ փոխադրուեցանք Գայսէրի ճատտէսի մաքուր տուն մը, ուր մենք մեզի հոգեւոր ընտանիք մը կազմեցինք, «գաղափարական» կեանքով մը ապրելով: Plain eating, high thinking.

Յաջորդ կիրակին եկեղեցի գտնուած պահուս, ուր կոմիտաս Վրդ. կը պատարագէր, Երուանդ Թօլաեան ինծի իմացուց թէ ոստիկան մը պատուիրած է որ երթամ Եստիկանապետին ներկայանամ: Զարագուշակ անակնկալ, որովհետեւ Գալէճիք ոստիկանութիւնը մեզմէ զատած, Պոլիս տարած էր Հնչակեան Արծրունին, պատերազմական ատեն յանձնուելու համար: Ոստիկանապետէն իմացայ որ զիս ուզողը կառավարիչն է եղեր: Եթէ գէշ լուր մ'ըլլար, Միւթէսարքֆը չէր որ պիտի հաղորդէր, որովհետեւ անախորժ գրծերը կը թողուին փոլիսին:

«Դուք այս տեղ անցեալ օր դիմում մ'ըրած էիք: — Այո՛, Զերդ Վսեմութիւն, աղօթելու հրաման խնդրած էի: — Աստուած աղօթքնիդ լսեր է, կարգացէք «ա հեռագիրք»:

Տախիլիչէն կը ծանուցանէր թէ ութ հոգի ազատ կը թողուին: (\* Երեքին անունները տառաւիտալով էին: Միւթէսարքֆը հարցուց թէ իմ կարգացածս շիտակ էր: Ապահովուելէն ետքը «Հիմա ո՛ւր են» քսաւ: — Եկեղեցին են: — Գացէք բերէք:

Կոմիտաս Վրդ. վերջին Աւետարանը կը կարդար: Աւետարանը համբուրելու համար Տքթ. Թորգոմեանի հետ իրեն մօտենալով, ըսինք թէ շուտով պատարաստուի, և հետերնիս գայ, որովհետեւ ազատման հեռագիրք եկաւ: Պատուական պատարագիչին դէմքը յանկարծ տարօրինակ պայծառութեամբ մը շողաց: Իր ուրախութիւնը չէր կրնար ծածկել նոյն իսկ խուռն բազմութեան առջեւ, ինչ որ կը ցուցնէր թէ մեր վիճակը ո՛րչափ երկիւղ պատճառած էր իրեն: Կառավարիչը մեզ ժպտադէմ ընդունելով, քսաւ թէ կը փափաքէր որ մեզի հետ ազատուէր նաև Տիրան էֆ. Քէլէկեան, որուն վրայ մեծ համարում ունի: «Ինչպիսի» ըսինք սրտանց: Նոյն իրիկունը ներքին գործոց պաշտօնարանէն հեռագիր մ'ալ եկաւ, Քէլէկեանը արտօնող որ «հայաբնակ գաւառներէն դուրս ո՛ւր որ ուզէ բնակի, ընտանիքով ալ, եթէ փափաքէ»: — Երբ իրեն կ'ուրախակցէինք, ինք առաջւան շեշտովը մերժեց. —

(\*) Կոմիտաս Վրդ., Վեր. Քերովբէեան, Տքթ. Թորգոմեան, Թօլաեան, մանիֆանտուայի խանութպան մը, ատամնաբոյժ մը, դեղագործ մը, և ծառանիդ:

«Արկից հուճա շեմ երթար: Չիս հոս նեհեցին, թո՛ղ այս սեղէն վերցնեն Պոլիս դարձնեն: Ինչէ՞ն ես ինքս պիտի որոշեմ եղեր իմ ախարայրս: Ի՞նչ րե՛ր եմ որ զիս կ'ախարեն: Ո՞վ դա՛ստ է զիս:»

Ի ներկայութեան ընկերներուս, ցաւ ի սիրտ ըսի իրեն թէ շիտակ չէր խորհածք. որովհետեւ Չանկըրը լոկ թրքական քաղաք մ'է խուչ անկիւն մը նետուած, մինչ Տախիլիյէի հեռագրին ոյժով, կրնար ընտրել Իզմիր, և եթէ ան չըլլայ, Պէրութ, եթէ ան ալ չըլլայ Հալէպ կամ Դամասկոս: Այս չորս քաղաքները եւրոպացիի աչքեր կան, հոն նուազ վտանգաւոր է, և պետական բարձր վարժարաններ կան, ուր իրեն պէս Օսմ. Համալսարանի մուալլիմ կամ միստերիս մը դիւրաւ պաշտօն կրնար գտնել, և նիւթապէս ու քաղաքականապէս ապահովուիլ:

Չհամոզուեցաւ: Ետքէն հասկցանք որ իր յոյսը դրած էր անզօր, անազդեցիկ Եուսուֆ Իզզէտտին իշխանին ու անարգօրէն հայատեաց Վանկէնհայմին վրայ որ զինք ալ խաբած էր շարաշար:

Թէև իր մասին անհաշտ, ուրիշներու համար թոյլատու էր: — Չանկըրըի Արապածի պաշըն պզտիկ գեղին մենծ աղան էր: Անոր ազջիկը կը խնամէր Տքթ. Բ. Տինանեան, բրու մեկնումէն ետքը, Սեւակ (Տքդ. Չիլինկերեան) էր որ ի գլուխ հանեց դարմանումը: Գեղեցկադէմ երիտասարդ մ'էր Սեւակ, և Թրքուհին անոր սիրտհարեցաւ: Հայրը հասկցուց բժիշկին թէ իր ազգակիցները ջնջելու հրաման կայ, բայց եթէ իսլամութիւն ընդունի և կարգուի այն աղջկան հետ որուն կեանքը ազատած էր, ինք ալ կը խոստանար իր փեսան փրկել վերահաս աղէտէն: Սեւակ խորհուրդ հարցուց ընկերներուն: Ամէնքն ալ, յունիս ամսուն հասնող գոյժերէն զգածուած, զինք խրատեցին առժամապէս համակերպելու: Քէլէկեան ալ համամիտ գտնուեցաւ, «զի ամէն բանէ առաջ իր կեանքը պէտք էր»: Բայց Սեւակ «բրբանայր նուաւսանալ հ» բսելով մերժեց, մանաւանդ որ կարգուած էր և իր կինը աշխրջ Գերմանուհի մ'էր որ կ'աշխատէր իրեն համար, բայց տարարախտ Սեւակ գուցէ չիմացաւ թէ ո'րպիսի ճիւղ մ'էր նոյն ինքն Վանկէնհայմ, որ «չէր ուզեր երեսը տեսնել Հայու ձք կինը եղած Գերմանուհի մը»:

Քէլէկեան նոյն խրոխտ կեցուածքը պահեց ցվերջ: Թալաուդ ինչպէս որ Չոհրապի ու Վարդգէսի ջնջումը ծրագրած էր «Տիարպիֆիլի պատերազմական ասեանէն ուզուած են» բսելով, Քէլէկեանի համար ալ ուր ուրեմն հեռագիր կը քաշէ թէ «Սիլվաս պիսֆ հ դրկիֆ պատուելու» (\*): Կը պատմուի թէ ճամբան չէրքէս գայմագամ մը և ոստիկան մը աչք կը գոցեն զինք փախցնել ուզող Թուրքերուն, բայց ինք յանձն չառներ. «Ես կրնամ ինկզիսնս պաշտպանել Սիլվասի պատերազմական ասեանին սուղը»:

(\*) Էնկիւրիի, Դամթէմունիի, Չանկըրըի ևն. Հայերուն տեղահանումէն ու բնաջնջումէն առաջ, պէտք եղած է փոխել այս տեղերու վայրերը, միւլիսարըրթները, նաև իմթիհատի Քեաթիպը Ումուլիները, (մայիս, յունիս և յուլիս, 1915):



բաւելով Հեռակալ օրը իր դործը կը լմնցնեն, Չամբը Պէլ չհասած, «հայկական բարձրաւանդակ»-ը ուր շարժուած:

Պոլիսէն երկու անգամէն տարագրեալներս 300 հոգի մը կայինք, որոնցմէ հազիւ քառասունը ողջ մնացին: Միւսներէն ամէն մէկուն «յոնցանք» ինչ էր: Ո՞վ քննեց երբեք: Քէլէկեան մանաւանդ ինչով կը մեղադրուէր: — Ըսուեցաւ թէ իր իթիլաֆականութիւնն ու դահաժառանգին կրգմէ ստեպ հրաւիրուիլը փուշ էին իթիհատի աչքին: Երբ աստիկանութիւնը ծանօթ գիրքը հրատարակեց «Հայ յեղափոխական աշարքներու» վրայ, իմացանք որ Քէլէկեան ամբաստանուէր է, իբր վերջին ատենապետ Պոլսոյ Հայ Ռամկավարներուն, ստորագրելուն համար «ազգային ինֆնասյախսակութեան կի համերաշխութեան» գիրք միւս երեք կուսակցութեանց հետ յաւիթ Տ. Մովսէսեան ազատեր է հետապնդումէն, որովհետեւ Ռամկավարներուն ատենապետ եղած էր առաջին շրջանին մէջ միայն. երբ Պոլսոյ Ռամկավարները կազմուած էին ո՛չ թէ համերաշխութեան, այլ Ն. Յ. Դաշնակցութեան դէմ պայքարի համար: Բայց եթէ Քէլէկեան կ'սպաննուէր Դաշնակցութեան հետ համերաշխութեան համար, յանցանք ինչ էր թուող հակադաշնակցական Արիստակէս Գապարեանի, ծանօթ փառաբան և Ազգ. Երեսփոխան, որ Այաշի տարագրելոց հետ կորուս:

Երբ չորս հոգի մնաք-բարովի գացինք հրամատարին, խրատելէն ետքը թէ շուտով մեկնինք, բրովհետեւ երկաթուղին կրնայ փակուիլ, խորհրդարար կարգացուց եկած հրահանգները Հայոց վրայ: 1915ի սկիզբները Սպարապետութենէն զրկուած այս գիրքը ջարդի հրաման չէին պարունակեր տակաւին, այլ միայն հայ զինուորներուն զէնքերը առնել, և ուր «դէպք» մը պատահի, իսկոյն ջնջել, առանց կեդրոնէն հրամանի սպասելու, ևն: Հայերը կտորբէլու ծրագիրը աստիճանաբար զայրացեր է, 1915 ապրիլի Վանայ յեղափոխութենէն ետքը (\*), և իր դիւանին մշտուցքին յանգեր է ամբողջ վերջերը, պատերազմին հանդէպ Պոլկարիոյ ընթացքին ստուգումէն ետքը:

Յուզումէն ու յրգնութենէն այրած չորցած աչքերով մտեր էինք Չանկըրի բանտը: Մեկնեցանք տամուկ աչքերով, կէս ուրախ, կէս տխուր, երբ կ'ամուրջին գլուխը, վերջին հրաժեշտը տուինք անոնց զոր ա՛լ մեր ետեւը թողուլ ստիպուած էինք: Անոնք էին որ մեզ կը միթարէին, յուսալով որ մեր մեկնելովը «ճամբան կը բացուէր» իրենց համար այլ, և վստահ էին այնուհետեւ Պոլսոյ մէջ ի նպաստ իրենց աշխատողներ ունենալու: (Այն ատեն անհատական ջանքերով ու բարեխօսութիւններով ազատողներ դեռ կը գտնուէին):

Աքսորի վերջին ընկերնիս որուն աչքերը համբուրեցի՝ վարուժանն:

(\*) Վանայ յեղափոխութիւնը, ապրիլ 6, հեռագրին Պոլիս գալը, ապրիլ 8, մեր ամէնուս ձերբակալումը, ապրիլ 11 (Ն. Տ.):

էր, ա՛ն որուն վիճակուած էր Սեւակի հետ միատեղ նահատակուիլ Էնկիւրիի ճամբուն վրայ, անօրէնութեամբ իթիթիհատական գրծիչ ձեւալ Սողուէի, ինչպէս 1920ին պարզուեցաւ նոյն իսկ Պոլսոյ պատերազմական ատեանին առջեւ:

Գալէճիք, ուր այն ատեն 200 տունի չափ Հայ կար, թէև ուշ հասանք, հայ բնասնիք մը չթողուց սր ազտութեանը գիշերենք, և տաք կերակուրներով հիւրասիրեց մեզ կէս գիշերուան մօտ: Սուտուն, երբ առուակի մը գլուխը սուրճ կը խմէի, հայ փռապան մը տեսութեան գալով գանդատեցաւ պատերազմի անուշով եղած բռնազրաւումներէն, և իր Մանուկ անուն օրգին ներկայացնելով, խնդրեց որ իր կարգացած թերթին խմբագրին լուսանկարը անոր տամ: «Յոր մեծնայ, ձեզ կը յիշէ»: Վրաս հայերէն այցաքարտս միայն կար, զրո տղուն տուի, գրելով. «Մանո՛ւկդ հայկազն, Ծուխը ծխանէդ, Ոյծը մկանէդ, Այիւրը մառանէդ, Ձեքն ու գինին հնձանէդ, Այօթիք բերանէդ, Եւ Ծերն ի քանէդ պակաս չըլլան»:—Փալէճիք, 1915 ապրիլ 29. Դ.Յ.՝:

Հետեւեալ օրը Ս. Համբարձման տօնը վայելեցինք Էնկիւրիի եկեղեցիին մէջ: Թաղ. Խորհուրդը մեզ նախաճաշով մը հիւրասիրելէ ետքը, առաջնորդեց Ս. Աստուածածնի վանքը: Մեզ հետ էր Վեր. Մաքնօթըն քանատացի միսիօնարը, զրո, իբր անգլ. հպատակ, Թալաադ-Էնվէր աքսորեր էին Գաղատիա: Հայ-կաթոլիկ ազգայիններ և Յոյներ քաղաքին եկեղեցին ու վանքը խռնուած էին կոմիտաս Վրդ.ին երգելը լսելու: Միջօրէէն ետքը, Տօնէլեանց այգիին մէջ, Սալըրեանք ու պարագայք 60 հոգինոց ճոխ սեղան մը տուին ի պատիւ աքսորէ ազատած Հայերուս: Դեռատի օրիորդ մը երգեց: Կոմիտաս Վրդ. խոստմնալից գտնելով ազգական երգեցողութիւնը, յիշեցուց թէ 18րդ տարին չլրացուցած աղջիկներ պէտք չէ որ բարձր շէշտով երգեն, այլ միշտ խնայեն իրենց ձայնալարներուն փափկութեան, և անոնց առողջութեան հոգ տանին կոկորդի մարածումներով, ոչ-գրգռիչ ուտեստով, և հրաժարուածով բգելից քմպելիքէ, ինչպէս որ ինք բոլոր կեանքին մէջ հակալքոլիկ մը եղած էր, և լաւագոյն քմպելիներէն անգամ կաթիլ մը բերանը չգրաւ մեր առջեւ (\*):

(\*) Երեք շաբաթ մէկտեղ ապրելով Կոմիտաս Վրդ ի հետ, սքանչացեր էի իր ֆիզիքական ու բարոյական առողջութեանը: Ո՛չ մահիճի, ո՛չ բարձի պէտք ունէր անմեղ մանկան խոր և անծակ քունը բնանալու համար: Լեզուն միշտ մաքուր ու զուարթ, սակաւապէտ, բարեհամբոյր, և վիստողներուն սիրտ տուող, նաև վերջին ծայր յարգող պատշաճութեանց, այնպէս որ մեր ազատութենէն ետքն ալ երբեք յանձն չառաւ ուրախ թեթեւ երգ մը երգել, այլ կա՛մ կրօնական կամ ժողովրդային տխուր տաղեր միայն լսուեցան իր բերնէն: Ձինք մօտէն ճանչցողներս իր խելագարութիւնը կը վերագրենք երեք պատճառի. (Ա.) Խորունկ ցնցումը զոր կրեց ի տես և ի լուր ազգային աղէտներուն. (Բ.) Պատերազմին բերամբ իր նիւթական վիճակին հիմնովին քայքայումը, և (Գ.) Իր խստակրօն ժուժկալութեան ջղային հետեւանքները:

Վանքին մէջ աչքէ անցուցինք Գաղասիոյ վերջին հայ Առաջնորդին՝  
 Կիւլէսերեան Բարգէն Եպս.ին՝ մեծ ինամով կարգի դրած, նոթագրած և  
 երկաթեայ սնտուկներու մէջ պահած կարգ մը շատ հին ձեռագիրները։  
 Հայ-հռոմէական ազգայիններ մեզ մօտէն ճանչնալ ուզելով, իրի-  
 կունք պատուասիրեցին Գասապեանց բնակարանին մէջ։ Գիշերը Տքթ.  
 Թորգոմեան և ես հիւրընկալուեցանք փաստարան և իտարէի ժողովին։



Քիւզանդ

Քէչեան

Ծն. 1859, օգնական Մամուլի եւ Թերեման Էճեարի  
 (1876-79), խմբագիր Մասիսի եւ Արեւելի (1879-1896),  
 հիմնադիր եւ սնորէն-խմբագիր Քիւզանդիոնի (1896-1916)։—  
 Հիւանդութեանը պատճառաւ սուպարէզին քաշուած ։  
 Այս լուսանկարը հանուած է Տէր եւ Տիկին Քէչեանի ամուսնու-  
 թեան քառասնամեակին յրանալուն առթիւ (1881 Յուլիս 23 —  
 1921 Յուլիս 23 Հ. Տ.)

անդամ Արմենակ ԷՖ.ի կողմէ, որ Քէլէկեանի և Բրօֆ. Թումանեանի հետ,  
 Հայոց երեք ընտրելիներէն մին էր Կեսարիոյ-Գաղատիոյ Մէպուսութեան։  
 Ո՛ւր են հիմա Գաղատեան Հայութեան այս պատուական ներկայա-  
 յուցիչները։ Տեղահանութեան յորձանքը, նոյն ամրան մէջ, քչեց տարա-  
 անոնց մեծագոյն մասը։ Վերջին վայրկենին, աւստրիական դեսպանին  
 միջնորդութեամբ, հայ-կաթոլիկ ազգայինք միայն ազատեր էին ջարդէն։

Էսկիչէհիբը Հայու մը մեծակառոյց պանդոկը պիտի իջնէինք, բայց համեաւ տուն մը տարուեցանք: Երբ պանդոկը հարցուցինք, Ահա՛, ըսին, և ցոյց տուին մուտքի մետաքսէ վարագոյրներով շքեղօրէն ծածկուած գեղեցիկ շէնք մը, որ վերապահուած էր Սուլթանի Ռէշատի բնակութեան, երբ խոյս տար Պոլիսէն, ա՛յնքան մօտալուտ կը թուէր Դարգանէլի անկումը: Ուրիշ փակ շէնքեր յատկացուեր էին Գահաթառանգին, Սէճիտ իշխանին, ևն., նաև Օսմ. Պանքայի սկիի մթերքին:

Էսկիչէհիբի ու Պիլէճիկի միջեւ, երկաթուղիի հայ պաշտօնեաներէն առաջին անգամ լսեցինք Պրուսայի տարագրումներն ու խոշտանգումները, Զէյթունի Հայերուն Սուլթանիէ (Դօնիա) անջրգի, ջերմոտ տեղ մը փոխադրումը, ուրկէ ալ տեղահանուելով պիտի տարուէին ի վերջնական սպանդ Տէր Զօրի, ևն.: (\*)

Երբ մայիս 2ի իրիկունը Հայտար ֓աշա և Կամուրջ դարձանք, մեզի դիմաւորող հարիւրաւոր ազգականներու, պաշտօնակիցներու և բարեկամներու շէնք կրնար ժայտագին երեւնալ, որովհետեւ մենք արդէն անոնցմէ աւելի բաներ մը գիտէինք ազգին գլխուն եկած ու գալիք փորձանքներուն վրայ: Սկիզբն էր երկանց, նորագո՛յն երկանց:

Ու մասածէ՛լ թէ այսօր, վեց տարի ետքը, Մեծ Պատերազմէն ետքը, նա՛ մանաւանդ. Համաձայնական Տէրութեանց յաղթանակէն ետքը, դեռ վերջը շեկաւ երկունքներուն . . . ու վիժմունքներուն ալ:

1921, Յուլիս

ԲԻԻՋԱՆԴ ՔԵՉԵԱՆ

Կ. Պոլիս, Բերս, Ֆերիսիէ, 16

(\*) Այս տողերը զրած պահուս իբր հուսկ յետին գոյժ մը կը կարդամ Թերթերուն մէջ Թէ այն կրկին ու կրկին տարագրումներէն ողջ մնացող ափ մը կտրիճներ ու իրենց ընտանիքները, որոնք Զէյթուն իրենց աւերեալ բնավայրը կրցեր էին դառնալ Կիլիկիոյ խաղաղութեան յոյսով, անգամ մ'ալ քշուելով իրենց բոյներէն, ի սպառ կոտորուեր ջնջուեր են ֆէմալեան հրոսակներուն կողմէ, որոնք արդէն մոխիրի վերածեր էին Մարաշն ու Հանքնը, տեղւոյն Հայութիւնն ալ ի միասին . . . :

## ՊԱՐՈՆԵԱՆ ԿԸ ԽՕՍԻ

Ո՛ր պատմութիւն, ի բաց տուտալ իրերը ճշգրութեամբ աւանդող գրիչները որ սակաւաթիւ են, բազում գրիչներ դէպքերը խեղաթիւրելը բաւական չհամարելով՝ կը յանդգնին իրենց ստույգութեանց ներքեւ գրել «Այս տողերը պատմութեան կ'աւանդենք . . . , թո՛ղ պատմութիւնը դատէ . . . , թո՛ղ ապագան իր վճիռը տայ» :

Հաստատակաց կատժիֆ, ազգին շահ, արդարութիւն և ուրիշ գեղեցիկ բառերու տկանջ մի՛ կախէք. մեր «Չայն բազմաց՝ ձայն Աստուծոյ»ին ալ մի՛ հաւատար, որովհետեւ աչքովս տեսայ թէ երկու հոգի կարող են «Աստուծոյ ձայն» մը կազմելու, ինչպէս անհատ մը շատ իսկ է ժողովուրդ հանդիսանալու համար: